Լհայ իմ տըլխմար վեզիր, յե՞ր կոչար ընդ վայր և նանիր. զեմ զիւրեանքըն դու տեսար, և զգանձատն սորուն լըեցիր։ Մի թէ դու՞ն անմահ էիր, որ զնոր թագըն խլեիր։ մուսէն քեզ խըրատ ետուր ոչ լըսեցիր զքեզ կորուսիր։ Յայնժամ հրամայեց խալիֆայն թէ՝ բերէք զկժերըն որ տեսնում։ Բերին զկժերըն և բային առաջի նորա. նա եղան ՚ի կժերուն ոչ զոև մուխ քան զառաջինն։ Եւ երբ տեսաւ զայն խալիֆայն՝ զարմացումն կալաւ զնա։ Եւ ասաց թէ փառք քեզ որ մեծ պատիւ էր այս սողոմօնի. որ իւր իմաստութեամբն ՚ի յայս նեղութիւ և ՚ի բանտս էր դրեր զդևքն. այսպիսի շնորհք հողեղենի չէր տուեր Աստուած՝ բայց միայն սողոմօնի։ Եւ ապա հրամայեց որ բերին պղինձ ոսկի և արծաթն զղումաշն և զակունքն և զմարգարիտն առաջի իւրն։ Եւ տեսեալ զնոսա զամ. շատ եղաց։

Եւ տասն ութերորդ առակ։

Ա՜ճող տամ հազար բերան, քո տիրոջն որում դուն էիր. որ այսչափ անհուն գանձեր, մէկ պատանքի մի մէնէ տարեր։ Երդամ ալաչեմ զքեզ, որ տայ ինձ ալէկ թապակիր

տիք. որ տան տամ և անդ առնում, և չթողում այսպէս ՚ի յերկիր: Եւ ապա հրամայեց որ զինչ մալ եղումաշ բերած էին, զամենն բաշխեց աղքատաց. և ասաց թէ՝ թող ա՛ծ զայս իւրեանց տիրոջ հոգւոյն համարի: Ապա բերել ետուր և ինքն զիւր մալն և զարծաթն և զոսկին և զապրանքն ա՛մ և բաշխեց աղքատաց: Մինակ մէկ կտաւ մի էառ, և ասաց թէ՝ զթագուհւոյն խրատն լսեմ. տան տամ և անդէնն զտանեմ յայս: Զոր ՚ի զնտանն էր արձակեց. զծառայքն ազատեց. և զհարկն մեր ցոյց ՚ի յաշխարհէն: Եւ պարօն մի եդեր ՚ի յիւր տեղն. և ինքն շինել ետուր սենեակ մի աղօթանոց և եմուտ ՚ի ներս և եօթն տարի աղօթեց. և ապա փոխեցաւ ՚ի յաշխարհէս: Եւ ամիր մուսէն այլ ետուր զպարօնութիւն, իւր որդւոյն և բաշխեց զիւր մալն և զոսկին և զապրանքն ա՛մ աղքատաց: Հագաւ մազեղէն և մաշկեղէն, և գնաց ՚ի լեռն բնակեցաւ ապաշխարութը մինչև ՚ի մահ: Այսպէս փոխեցան ՚ի սուտ և ՚ի փուտ յաշխարհէս և հասին յաւիտենական կենայն և յերկնային ուրախութին ՚ի Քս Յս ՚ի Տր մեր: Որ է օրհնեալ յաւի
տեանս յաւիտենից Ամէն

# ՅԱՂԱԳՍ

Պատմութեան Փոհըրուլ Թագաւորին :

ԷՐ ՍԱ ՄԵԾ ԹԱԳԱՒՈՐ ՆԵՒ յորեւելեան ծին, եւ էր իմաստուն եւ առա-քինի : Սիրէր զաղքատութի̃ եւ ատէր զայս կեանքս եւ ասէր · փառք նմա կենդանւոյն որ կայ եւ մնայ յաւիտեան :

Եւ ասաց ընդ իւր անձին շնորհաւ զայս :

Զորժէ այս կենայս իմք մեն, այն կենայ ինչ մէկին մեն մաք · յորժամ բաժանի հոգին, կու մը-նայ շատ մարդոյ վրայ : Յէ՞ կամիս սիրել զայն իրքն, որ կենայ հետքեզ զէտ՝ խլայ· ժողվէ զու-

զա

զանանց բարին, և արա զինքն քեզի ծառ։ Այնպէս դու բարի գործէ, և բաշխէ զինչքըդ աղքատաց. որ օրըն մահուան հոգիդ, և մարմինդ չառնէ վաղ 'ի վաղ։ Եւ 'ի ժամաղօթիցն հանէր զամէնն 'ի դուրս. և ինքն մէն մնայր և աղօթս առնէր 'ի վերայ ոսկի աթոռոյն։

Եւ պարծեցաւ աներընդ այնչն Յովսափատ արքայ։

Մի աղօթից ծոյլ կենար, դիր ըզորդ հետ այ սէր, յիշէ զիւր ահեղ անունն որ փրկիս որպէս ադամն էր իւր ձեռօքն է երկինք և երկիր, ըստեղծող և տէր ամենի. զանա խնդրել դու զբարի, որ փրկիս հրոյն գեհենի Ամէն օր իւր սովորը կան աղօթքն կառնէր. և օր մի հայեցաւ 'ի դարպասն 'ի վերը. և տեսաւ մէկ 'ի ձևիւր ըղտապանին. և ասաց' քեզ ով հրաման ետուր որ 'ի հոս եկար։ Ասէ այն մարդն' ես ըղտապան եմ և զուղտերս կորուսեր եմ, աստ կամիմ գտանել։ Ասէ Թագաւորն' ինչ կանէ ուղտն 'ի վերն դարպասին որ 'ի հոս կամիս գտանել։ Ասէ այն ըղտապանն' ապա դու որպէս կամիս զած գտանել 'ի վերն ոսկի աթոռոյդ և 'ի վերն փետրալից բարձիդ. և 'ի մարգարտաշար Թախտիդ։ Այդ աղօթքդ չէ ընդունելի այ. այլ արի էջ յաթոռոյդ և եկ 'ի վերն մոխրոյն և այնպէս երկրպագ է այ. և ա[illegible] գտանես ողորմութիւն. Եւ ասաց ըղտապանն որ 'ի ձև մարդոյ երևեցաւ։

## Զնափառ շուշան։

Երկրպագեմ անմահ բանին, Թագլեալ զերեսս ՚ի հողին. որ այն մոխրէն զքեզ ստեղծեաց, և նման արար իւր պատկերին։ Զայս կեանքս քանի դու սիրես, անճար կերթաս ներքև հողին. մի անշահ կենօք կենար, մի փոխեր զոսկին պղնձին։ Զայս սուտ և անյայտ եղև այն մարդն որ ՚ի ձև ըղձապանի է ը։ Այս իմացաւ Թագաւորըն որ հրեշտակ էր մարդն այն. և անկաւ զեղջ ՚ի խոր միտքն և ելաց դառնապէս. և իջաւ յաթոռոյն ՚ի գետին և երկիրպագ այ։ Եւ թէպէտ կատէր զիւր կեանքն այլ աւելի անտեղ այնու հետև զաշխարհս և զմեծութիւնն։

### Եւ տաղ ՚ի վէ անձին իւր զնափառ շուշան։

Հոգիս սիրելս թէ ջանամ, նա մարմինս ինձ կու տայ ՚ի խափ. զինչ որ խոյանայ բաղձն, կաշառնուն չընկնին այլ ՚ի յափ։ Կուտեցաւ առ իս շատ մեղք, յայն նման որ յերբ գայ շարափ. խոցեցերեմ մահու սրով, և եղերերեմ զինչ որ շառափ։ Եւ սակս կոչեցէ զիւր մեծամեծքն և զիշխանքն. և եբեր զիւր որդին և նստոյց առաջի նոցա ՚ի յաթոռն իւր, և նոքա ոչ կամեցան. և նա ուժով և իմաստութեամբ հաւանեցոյց զիշխանքն և զզօրքն։ Եւ ինքն գաղտաբար ելեալ ետ զանձն իւր յաղքատութի. և ելաւ յաշխարհէն իւրմէ, և թող զթագաւորութիւն վասն սիրոյն այ։

Եւ

Եւ ապա ընդ իւր ասէր Զեփիւռ ղայն

Յիշեա՛ զարարիչն քո, տուր հոգւոյդ առնել պատարագ. Է մութնյե՞ր կամիս գտնալ, երբ սատենս լինի քեզ Ճարակ: Ըզ մարմինդ քանի սիրես, և հետ իւր երթաս դու կամակ. ընկերք քո գնացին սատի, բնակեցան ի տունն անքանակ: Եւ քեզ ամէն օր ասեմ, հասիր շուտ նշ դու միակ. Թէ չէ եղկելի հոգիդ առաջի ի հուր և ի կրակ: Այս գնայցյեն յն և եհաս ի պաղատատ. և մնաց ի քաղաքն և կամեցաւ կենալ անդ ի կերպարանս աղքատի մուրացող: Եւ մարմինն նեղէր զինքն ի կողմանէ ուտելոյ և ըմպելոյ և ագանելոյ. զի սովոր էր ի սէր Տէրն. և կեցեալ ի տունն արքունի: Այս իմացաւ հնարք, և երթայր ի շուկայն, և լինէր սուտ խև: Եւ մարդիկն ծեծէին զինքն. և որդայքն ի հետ երթային և ննեղէին:

Աղերսէր և ասէր ի մէջ ծաղկանց Զեփիւռ ղայն:

Մարդիկ մի անհոգ կենայք, ձեր մեղաց զաղօթն լըսայեք. ողորմեցէք աղքատաց, և այնով ձեր մեղքըն քաւեցէք. Դարձիք ի մեղաց Ճանփէն, և անուշէն ձեզ տուն շինեցէք. զմարմինդ ի կամաց հանէք, մի թողուք ի կիր նեղելոյ: Եւ զեղջեդն հեծնոյր, և վայր և ի վեր վազէր և ասէր բան զարմանալի: Ասէին մարդիկն որ ի հետ երթային. Թէ մարգարիտն ի [illegible]ընէն ի վայր կու թափի և ոչ գիտէ թէ զինչ կասէ. հազար աւաղ զխելօք խումարս: Եւ այս դըրին իւր անունն փահլուլ. և նա

եղև

եղև ջրկիր և ջուր կրէր 'ի շուկայն. և տային խու-րճն հաց և փող. այլ նա զամենն տայր աղքատաց.

Եւ ասաց Զենոփոն ղայս.

Աղքատութիւն և պահքն, և աղօթքն ընկերք են հիտրայ. սիրէ զայդ 3 բարիս, որ փրկիս 'ի մեծ տանջանաց։ Մի զմարմինդ 'ի ձեռաքդ առնու, կու գընայ օրերդ 'ի ձեռաց. այս օրերս որ մեք ունիմք, կու հասնի և կերթայ 'ի բաց։ Աւուր մի կերթայր 'ի շուկայն 'ի վայր. նա մէկ մի խլէց զիւր փակեղն 'ի գլխոյն և փախեաւ։ Եւ գնաց փահլունն 'ի հողվարքն կու փընտռէր զայն մարդն որ փակեղն էառ փախեաւ։ Նա տեսաւ մէկ մի և ասաց. է փահլուլ այս տեղս ինչ կանէ այն մարդն. գնա 'ի շուկայն փընտռէ։ Ասաց փահլունն. այ եղբայր ուր երթայ՝ վաղն անագան 'ի հոտ պիտի գայ։

Եւ ասաց Զենոփոն ղայս.

Թէ չատ թէ քըչիկ զըկես, և վայլես զերկիրս խընդալով. քեզ ճարն աստի է գընալ, և մարմինդ ծածկի հողով։ Դարձիր և բարի գործէ, գիտ բըժիշկ և դեղ քեզ շուտով, որ ահեղ և մեծ ատենն ջըլլինիս ահով և ամօթով։ Ընտելացաւ ընդ քաղաքացւոյն, և ճանաչէին զինքն ամէն մարդ նա օր մի՝ միս երետ մէկ մարդ մի թէ տա՛ր 'ի մեր տունն. նա էառ և 'ի հողվարքն տարաւ եփիր։ Եւ դարձաւ եկաւ այն մարդն 'ի տունն իւր, և տեսաւ որ զմիսն չէր բերեր. և գնաց գտաւ զփահլունն 'ի

ջու

ջուկայն եւ ասաց. ո՞ւր է միան զի՞նչ արիր։ Ասէ փահլուլին՝ ՚ի քո տունն տարի։ Ասէ մարդն այն. արի ցոյց զիմ տունն։ Երա՛ փահլուլն եւ էառ զայն մարդն եւ գնաց ՚ի հողվարքն։ Եւ ասաց այն մարդուն այս է իմ տունն Ասէ. փահլուլն. հա՛ այս է քո տունն այն տունն որ հիմի կու կենաս՝ այն չէ՛ մնա յական. զի յետոյ ՚ի հոս պիտի գաս։

Եւ տասն Ջինֆթա ղայյա։

Աշխարհիս սահմանքն է հանց, կեահ կու լյուծի կեահ թերանայ. կու թեթեւցնէ զիւր բեռն, թէ ով շալկել որ կարենայ։ Մըտիկ հիւսանին արէք, որ թագաւութ ուրոյք չինէ նա. մէկըն գայ մէկըն գնայ, իւր քանըն պաթաւչըմնայ։ Զարմացաւ այն մարդն ընդ փահլուլին խօսքն թէ՝ մեք զդա յիմար գիտէաք, նա մեզ վարդապետ եղեւ։ Եւ ունէր սովորութիւն փահլուլն որ կերթայր ՚ի հողվարքն կու կենայր. եւ շատն ՚ի հոն կու պառկէր։ Օր մի ՚ի դուրս էր ելեր խալիֆայն շահեծելովք. եւ դէպ ՚ի հողվարքն կանցնէր. եւ տեսաւ զփահլուլն եւ ասաց փահլուլին թէ՝ հոտ ինչ կանես։ Եւ ասէ փահլուլն. է տիեզերական խալիֆայ. զայս ամէն մեռելքս կու նզովեմ։ Եւ ասէ խալիֆայն. յէր կու նզովես։

Եւ տասն Ջինֆթա ղայյա։

Թէ շատ թէ քիչ զըրկէ մարդ, նա հետ իւր տանէ ւչըրկարէ. մարդըն պիտի հանց ջանայ որ ՚ի քայն կեանքըն չպակսէ։ Որ ՚ի հօս տայ հօն առնու.

հոս զըրկէ նա հոն վըճարէ. այն կեանքըն ճարիկ չկայ որ փողով իւր պարտքն խալըսէ։ Զարմացաւ խալիֆայն և ասաց՝ փառք այ կենդանւոյն որ կայ և մնայ յաւիտեան. թէ խումարըն այնչափ խելօք խօսք կու խօսի։ Եւ ասաց թէ այս մարդս խելօք է և վն մեղաց զայն կառնէ. զի թէ դա խումարէր՝ նա հանց բան չասէր. և դարձաւ խալիֆայն ՚ի քաղաքն։ Եւ օր մը այլ հեծեալ էր խալիֆայն և անցանէր դէպ ՚ի հովվարքն, զի ճանապարհն ընդ այն էր. և տեսաւ զփահլուլն և ասէ զինչ կառնուս ՚ի հովվարքն։ Եւ ասէ փահլուլն. բազումաւուրք աստ կամ և կու չափեմ զիմ գերեզմանն և զքոյն, նա իսկի քոյն աւելի չէ քան զիմն. դու խալիֆայ ես, և ես աղքատ մուրացիկ եմ. և քո հողն և իմն մէկ չափով է։

Եւ տաղ Ջէհֆաո ղայս։

Ե մարդ մի զհոգիդ դատեր և զմարմինդ առնէր սիրելի. դարձիր ՚ի մեղաց ճանփէն, որ չլինիս ողորմելի։ Զանձ և բարի գործէ, զի քեզ վըրանըն քեզ կու նայի. այս հողոյս դու հանց գընա, որ հոգիդ հըրոյն չլինի։ Եւ ասաց խալիֆայն ընդ իւր մեծամեծքն. տեսէք թէ ինչ իմաստունէ դորա խօսքն. և համարձակապէս խօսքն կու տայ. չէ պարտ որ զդա ՚ի մեզանից ՚ի զատ թողումք. և այս հրամայեց կոչել զնա ՚ի յիւր դարպասն։ Եւ օր մի խալիֆայն ՚ի յաթոռոյ ելեր գնացեր էր, և գնաց փահլուլն նստաւ ՚ի յաթոռն խալիֆային

Եւ

Եւ եկին ճորտերն սկսան ծեծել զնա, և նա ճչեց պինտ։ Լսեց խալիֆայն՝ երեկ և՛ի սիրտ եղաւ ծառաներուն, և ասէ. է՛ փահլուլ յ՞եր կու ծեծեն զքեզ։ Ասաց փահլուլն. է՛ տիեզերակալ խալիֆայ. երբ զիս այս մէկ պահ նըստելուս համար հանց կու ծեծեն. ապա՛ ի քեզ զի՞նչ պիտի անեն դատաստանին։

Եւ այլ Ջէհֆայ ղըսայ։

Մարդիկ. մի ծեծէք դուք զիս, չեմ ցանկար մի ուայդ աթոռոյ. զիմըն քակեցի և ելայ, և չունիմ սրտիկ չինելոյ։ Իմ կեանքս իմ աչացն ելեր, այլ չունիմ տեղիք խընդալոյ. դրըրի զիմ մարմինս ՚ի մահ, զի չունիմ հոգի տանջելոյ։ Ո մարդ որ վա ուայդ համար տէր յերկրի եղար և աթոռոյ. դու հանց չըփայար՝ի քեզ, որ չըրդնես դու մոռցաւ մարդոյ։ Ահ ՚ի մահուանէ չունիս, ո՞չ ճարես պաշար գնալոյ. Ծիս փառքն այլոց թողուս, կու լինիս դու ափ մի հողոյ։ Լսեց խալիֆայն զայն իմաստուն բանքն, և հարցանէր շատ բանս փահլուլին. և նա հնարիւք տայր զպատասխանին։ Եւ յայլ՝ի մէկ օր մի հարցաւ խալիֆայն ընդ փահլուլն և ասէ. փահլուլ ասա ինձ թէ այսօր ինչ կանէ ած։ Ասէ փահլուլն. այդ դիժար հարցմունք է. այսօր համբերէա ինձ, վաղիւն ասեմ։ Երեկ վաղիւն, և հեծեալ էր ՚ի սև յէշ մի։ Ասէ խալիֆայն. ասա ինձ թէ ինչ կանէ ած։ Ասէ փահլուլն. հրամայէ որ զմէն ծառայքդ՝ի դուրս ելանեն

նէն, և ես տամ զպատասխանին։ Եւ հրամայեաց խալիփայն ծառայիցն ելանել 'ի դուրս. և մնաց ինքն փահլուլն մէն։ Եւ ասէ խալիփայն ի՞նչ կու-տունէ ինձ 'ի յայս ժամս։ Ասէ փահլուլն. է խալիֆայ արի պահ մի նիստ 'ի յիմ էշս, և ես 'ի քո յաթոռդ նստիմ. նա տեսնեմ քեզ թէ ինչ կանէ ինձ։ Եւ հայեցաւ խալիֆայն որ մարդ չէր երևէր 'ի բոլորն ելաւ նստաւ 'ի յէշն. և փահլուլն 'ի խալիֆային աթոռն նստաւ և ո՛չ խօսէր։ Ասէ խալիֆայն. յէր չես խօսիր ինչ կան է ինձ։ Ասէ փահլուլն. ինչ խօսեմ չե՞ս գիտեր թէ ինչ կանէ ինձ. դու որ խալիֆայ ես 'ի յէշս իմ նստայուց. ես որ փահլուլեմ, նա 'ի քո աթոռդ նստայուց. ահա զայս արար 'ի ժամուս յայսմիկ. և խալիֆայն զարմացաւ և ո՛չ կարէր խօսիլ։

Եւ տայ Փահլուլն Ջուֆայն տղայ։

Դու զանքննին յե՞ր քննես, երբոր մեղքըդ իւրեան չհասնի. զինձ ո՛վ կարէ տեսնուլ, կամ իմանալ զնա մարդ կենդանի։ Երբ չես քո կենացըդ տէր, կու մնաս դու յերկուց շընչի. այլ տէր հայրենեաց է նա, որ երկինք և երկիր կուտանի։ Ծիծաղեցաւ խալիֆայն և ասէ փառք Այ կենդանւոյն և բարձրեալըն յաւիտեան. զի այս ցեղ խևս զարմանալի պատասխան կու տայ. բայց թուի ինձ թէ չէ դա խև այլ խելոք է. և գնաց փահլուլն։ Եւ անցաւ օր մի քանի 'ի վրէ. և հրամայեաց խալիֆայն կոչել զնա Եւ նա նստաւ 'ի յէշն

և

և եկաւ առ խալիֆայն։ Ծիծաղեցաւ խալիֆայն և ասէ. փառք ա՛յ կենդանւոյն և բարձրելոյն յաւիտեան։ Եւ ասէ խալիֆայն. իբր մի կամիմ հարցանել ՚ի քեզ և դու զորոշն ասա։ Եւ նա ասէ՝ Հրամայեա խալիֆայ. Ասէ խալիֆայն. Թէ քանի աստղ կայ ՚ի յերկինքն։ Ասէ փահլուլն. ես աղէկ գիտեմ, զամենայն համբեր եմ ասէ. որչափ իշուս վերայ մազ կայ՝ նա այնչափ աստղ կայ ՚ի յերկինքն, Թէ չես աւատար՝ իջիր դու համրէ։ Եւ իջաւ խալիֆայն աթոռոյն, և սկսաւ համրել զիշուն մազն։ Ասէ փահլուլն. յառաջ զագին համրէ։ Եւ սկսաւ խալիֆայն այնպէս առնել և ոչ կարէր, ծիծաղեցաւ խալիֆայն։

Եւ այս Փահլուլն Զինափառ ասյս։

Ամ յերբ չըգիտես հիմայ, Թէ գըլխոյդ մազըն քանի է. զէտ զիս փահլուլ յէր լինիս, Թէ յերկնից աստղըն քանի է։ Զինչ որ ատ գործել լինի, ամէնին համար տալոյ է, որչափ զըրկէ գանձ ժողվէ, հաս թողու տանիլ չկարէ։ Ամաչեց խալիֆայն, և եթող զիշուն ագին ՚ի համրելոյն և եկած նստաւ ՚ի յաթոռն։ Եւ ասէ փառք ա՛յ որ այսպէս գիտութբ պատուէ զսիրելիս իւր. և տայ զիմաստութիւն ում որ կամի զոր ոչ ոք կարէ տալ նմա պատասխան ՚ի բանս և ՚ի հարցմունս իւր։ Այպիսի վարուք կեցեալ փահլուլն՝ և երանելի կենօք փոխեցաւ յանխախտն թագաւորութիւն ՚ի Քն Յն ՚ի Տր մեր։ Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ։ Այժմ և միշտ"։

## ԽՐԱՏ Բ

Ե՛ նաւուհէք օգտակար։

ԱՐԱՐԵԱԼ ԶԱՐՄԱՆԱԶԱՆ
Թագաւորին՝ որ Նուշրավանեան է։ Սա
աւեն թագ մի ունէր, ոսկի և պատուա
կան ակներով. և շինածէր քսան և երկուս ան-
կիւնով. և ամեն անկիւն՝ այս նախհէթներուգը
րած էր։ և յորժամ եւնէր՚ի դուրս՝ կարդայր ա
ռաջի զօրայն և ասէր թէ՝ ՚ի մէտ առէք. և այս
գնէր՚ի գլուխն Ե՛ն թագն էր եախուսթ և զըմ
րուխտ ակամբ և ալմաստով. և լաջվարդ քարով
յօրինեալ։

Ա

Ա

Զանձնահաճ մարդն յինէ ՚ի զատ պահեսջիք։ Արժանաւորաց՝ իմ զանձէն բաժին տուէք։ Բանագէտ մարդկանց դէմ՝ անպատեհ խօսք մի խօսիք։ Զանգիտանելին՝ մի փնտրուէք։ ՚Ի բանին՝ մի արտորայք։ Զբանն՝ ժամէ ՚ի ժամ մի ձգէք։

Բ

՚Ի բանին՝ սկիզբն և ՚ի կատարածն հայեցարուք։ Յո՛ր տուն որ մտանէք՝ յառաջ զէրն իմացարուք։ Զամէն բան կամ կտաւ՛, 10 տպրայ չափեսջիք և ապա կտրեսջիք։ Զփորձածն՝ մի փորձէք։ Ըզփորձածն՝ անփորձի մի տայք։ Զմարդն որ չէք փորձեր՝ նմ մի վստահանայք։ Զխոստումն որ ՚ի ձեզ է՝ մինչև ՚ի ձեր անձն մի խնայէք, Սակաւ խոստայէք՝ և աւելի կատարեսջիք։

Գ

Անուանի և խոնարհ արուեստ ուսիք։ Զճշմարտութիւն՝ սիրեսջիք։ Զկարօղութեն հարկիքն՝ գիտացէք։ Զհամբերող մարդն՝ ճանաչեսջիք։ Զայս կեանքս՝ մի օր գիտացէք։ Զառողջութեն հարկիքն՝ գիտացէք։ Զձեր կեանքն՝ անգիտութե՛ մի անցուցէք։ ՚Ի յայլոց տգիտութիւն՝ մի խնդայք։ Ընդ կոտորածն՝ ընդ գընայածն՝ ընդ Թափածն՝ ընդ այրածն՝ մի տրտմիք։

Դ

՚Ի մեծամեծաց յոր գայթն՝ կոծեցարուք։ Մարդկանց՝ ամենայն ինչ համբերեսջիք, ՚Ի տեղի ուր

համբերել պիտի՝ մի ըշտապիք: 'Ի հետ ամէն մարդոյ՝ ոխակալ մի լինիք: Ամէն մարդ՝ զիւր չափն թող իմանայ: Զձեր զոտն՝ քան զձեր անկողինն աւելի մի մեկնէք: 'Ի պատերազմէ՝ երես մի դարձնէք: Զայլոց կռիւն՝ 'ի ձեր յանձն մի առնուք:

Ե

Կռիւ թէ հանդիպի 'ի ձեր մէջն միջակ արարէք բայց շուտ հաշտեցարուք: 'Ի սըրտներդ՝ նախանձ մի պահէք: Զամէն բան՝ համբերելով արարէք: Սկիզբն նոր տնկելով արարէք՝ եւ ապա զհինն խլեցէք: Զերեւելի զգայարանք ձեր պատրաստ պահեցէք: Անպատեհ բաներուն՝ 'ի զատ կացէք: 'Ի մէջ մարդկանց՝ վատ անուն մի լինիք:

Զ

'Ի գողութեանց ընչից՝ մի շահիք: Ի յեզեր թագաւորի՝ տուն մի շինէք: Զձեր բնակութիւն՝ մօտ 'ի խանութ մի շինէք: 'Ի պիղծ մահալլէից՝ 'ի զատ կացէք: Որք անխրատք են՝ իշխանաւորի թող ծառայութիւն չանեն: Անընկեր՝ 'ի Ճանապարհ մի երթայք: Անարժանից՝ մի խոնարհիք: 'Ի հետ չար կամաց՝ մի դատիք: 'Ի յօտար հող՝ ծառ մի տնկէք:

Է

'Ի յաղահատ տեղիք՝ սերմ մի ցանէք: 'Ի հետ ամէն ազգ մարդոյ՝ մի փաթըլթուչիք: 'Ի նոր քսակ մարդուէ՝ փոխ մի առնուք: 'Ի հետ անարժանն մարդկանց՝ մի նըստիք: 'Ի հետ անհարկից՝ սէր մի դնէք: Քամահ մարդկանց՝ մի հաւատայք. եւ 'ի

հետ

հետ նց՛ աղուհաց մի ուտէք։ 'Ի հետ ծառայի մի կռուիք՝ որ չամաչէք իւր տիրոջէն, և իւր աղայէն 'ի զատ կայէք։ Զտեսած մարդոյ հետ՝ սիրելութի մի առնէք։

Ը

Որդին որ մօրէ յաւուր ծննանի իւրն դեղ մի առնէք․ զիրա փայտա չունի։ Անշահ մարդոյն և խեղառւին՝ հարբածին՛ խրատ մի տայք։ Դուք զձեզ՝ մեծ մի տեսնայք։ 'Ի լեզուանի կնոջէ՝ պատրաստ կայէք։ Ով որ զխրատն սիրէ՝ այնոր արժէք։ Զուտելն և զխմելն՝ մինակ մի սիրէք։ Ձեր հնազանդելոյն՝ կիւձ մի անէք։ Զձեզ սիրօղն՝ մի ատէք։ Ով որ 'ի ձեր հետ սէր ունի՝ զնա անտես մի առնէք։ Անպատեհ պատճառէ՝ զծառայն ձեր մի ծեծէք։ 'Ի յայլոյ հացն՝ աչք մի ձգէք։

Թ

Զձեր հացն՝ յայլոց սեղան մի դնէք։ Երբ զձեր հացն ուտէք՝ զձեր գլուխն տեսէք։ Տղայոց և ճահիլից հետ՝ թէպտիր և մուշալերէ մի անէք։ Օտար կին և պառաւ՝ 'ի ձեր տունն մի թողուք։ 'Ի չար կնոջ խիլաթէ՝ պատրաստ կայէք։ Զձեր հոգին 'ի ձեր մարմնոյն՝ ծառայ մի անէք։ 'Ի ձեր որդւոց և դստերաց՝ մահն մի տրտմիք։ 'Ի յօտարք բան մի վստահանայք զերդ փորձած։

Ժ

Զայգին ձեր 'ի պահ օտարի՝ մի տայք։ 'Ի յայլոց այգեանք իբրև զտէրն իւր՝ մի վստահանայք։

՚Ի յօտար մարդոյ տուն՝ տանուտէրութիւն մի առնէք։ Զօտարն որ չէք ճանաչեր՝ ՚ի ձեր տունն տանուտէր մի դնէք։ Այն մարդիքն որ զայս կեանքս խիստ կու սիրեն՝ դուք զնա մի սիրէք։ Առն և կնոջ՝ ծառայի և աղախնի՝ շատ մի ձգէք։

ԺԱ

Առ Թագաւորն՝ ահարկու և պատրաստ կացէք։ Թագաւորն թէպէտ խոնարհի՝ դուք մի համարձակիք։ Իշխանաւորն սակաւ սիրեցէք՝ բայց ՚ի ղէ յպէթն զինքն մեծ սիրեցէք։ Ոխակալ մարդկանց ՚ի զատ կացէք։ Զամէն մարդոյ հարկիքն իմացէք։ Ընդ բախտաւորն և ընդ դօվլաթաւորն մի նախանձիք։ Ընդ իմաստունն՝ մի դէմ առնէք քամահէք. զի նոքա տէր են՝ գրչի և իմաստութեան։ Այն ոք որք դիտունք են զնա թեթև մի տեսանէք։ Թէպէտ դուք իմաստուն էք՝ այլ քան զձեզ աւագն մի արհամարհէք։ Ընդ հանճարեղին՝ մի վարիք։ Այն ոք որ ծերք են պատուեցէք և զաւագան լերուք նոցա։ ՚Ի բանաստեղծ մարդկանց ՚ի զատ կացէք։ Դուք զմարդն՝ ծաղր և ալնաղ մի առնէք։

ԺԲ

Զծերքն՝ հարկաւ սիրեցէք։ Զմեծն՝ մեծ սիրեցէք։ Զխաբուսիկն կորեցէք ՚ի միջոյ՝ որ անհոգ կենայք։ ՚Ի հետ ժլատի և ոչ ինչ մարդկանց՝ մի նստիք։ Զհօր և զմօր՝ և զ[illegible] հարկիքն՝ մեծ տեսէք։ ՚Ի ձեր մօտ աղքէն՝ մի կորիք։ ՚Ի մէկ

հետ

հետ մարդոյ մի՛ տայք զձեզ զկլանել։ Զերդումն և զպայմանն որ է ահթ և ամեն մի՛ կոխէք։ Անկոչ՝ ՚ի պատիւ՝ մի՛ երթայք։

ԺԳ

Յամառութս ձեր՝ խրատիւ և իմաստութբ կացէք։ Թէպէտ և դուք չար լինիք՝ զաղէկն սիրեցէք։ Իսկ Թէ աղէկ լինիք զչարն մի՛ քամահէք։ Ապա մարդկանց սրտին՝ մի՛ օգնէք։ ՚Ի սիրելոյ և ՚ի զարմէ զգուշ մի՛ վերցնէք։ ՚Ի հետ պիղծ մեռելոյ՝ զձեր մեռելն մի՛ դնէք։ Ուսումն՝ և խելք ունիք ՚ի խրատէ՝ մի՛ ամաչէք։ ՚Ի մէջ մարդկանց՝ քան զքարին՝ այլ բան մի՛ խօսիք։

ԺԴ

Ով քան զձեզ աղէկ է և գիտուն՝ զնոքն մեծ ամեսէք։ Իսկ այլ իրաց՝ քան իմաստութեց բանից՝ այլ բանի խնդրողն մի՛ լինիք։ Թէ իմաստունքն հեռի են՝ դուք գնացէք ՚ի ուրեանց մօտն։ Զանցեալ ժամանակն՝ հեշտ մի՛ համարիք։ Զինչ որ ծս չունիք՝ ՚ի մարդուէ մի՛ խնդրէք և մի՛ քրքրէք։ Թէ կուզէք որ անհոգ մնայք՝ աղէկ արուեստ ուսիք։ Բան մի՛ որ ՚ի պահ առնուք՝ ՚ի տէրն հատուցէք։ Փոխ որ առնուք՝ վճարեցէք։

ԺԵ

Խօսք որ ՚ի խելաց չէ՝ մի՛ խօսիք։ Խօսք որ ասելու չէ՝ մի՛ ասէք։ Զլեզուն ձեր ՚ի չար ասելոյ՝ մի՛ սովրեցընէք։ Անպատեհ խօսից՝ մտիկ մի՛ դնէք։ Պիղծ խօսից՝ պատասխան մի՛ առնէք։ Թագա-

ւոր

ճորայ՝ յոյս մի դնէք։ Ամէն ոք՝ թող իւր օրէ֊
նստն մէջ ըլլի։ Մինչ որ լսէք զպատասխանին՝ սպա֊
սեցէք։ Զբանն որ չգիտենայք՝ մի ասէք։ Զինչ
բան որ՝ ի ձեր սիրտն չկայ՝ զայն լեզուաւ մի խօսիք։

ԺԶ.

Ամենայն մարդոյ խօսայ՝ մի վըստահանայք։ Զբարի խօսքն՝ ամէն մարդոյ ընդունեցէք։ Ոչ իրաւ և ոչ սուտ՝ մի երդուիք։ Զայն կեանքն ընդ այս կենցաղոյս մի փոխէք։ Ամէն մարդոյ զայն կամեցարուք՝ զինչ որ ձեր անձինն կուզէք։ Որբերոյ իրք՝ մի խնայէք։ Երկայն ճանապարհի՝ պաշար պատրաստեցէք։ Այրեաց՝ հանապազ ողորմեցէք։ Կըտրճութե ժամանակն՝ զծերութին խելք բերէք։ Զծերութե բանն՝ ի կըտրճութե ժամանակն հոգացէք։

ԺԷ.

Իժլատութե փախիք։ Առատութե՛ առաջեստ ուսիք։ Սկիզբն առատութե՝ ի ձեր հալալ՝ արդեանցն արարէք։ Զմարդկութե կերպն՝ ճանաչեցէք։ Ի հետ հարկաւորայ՝ սէր. դըրէք։ Ի յածէն և յանդիմէն՝ խնդիր մի խնդրէք։ Ի հետ ամէն մարդոյ՝ սէր և հարկաւորութի ըն ժամանակին արէք։ Զպատուական՝ պինդ բըռնէք։

ԺԸ.

Զմռան զախիրան՝ ամառն հոգացէք։ Զայսաւուր բանն՝ ի վաղն մի ձգէք։ Զբանն որ եղած չէ՝ զետեղած մի ձևէք։ Զդեղն՝ առողջութե ժամն խմեցէք։

խմեցէք։ Զհաճամաթն՝ 'ի յատենին առէք։ Երբ ծեր լինիք՝ կրտրճութիւն մի ցանկայք։ Զբանգէտ մարդն՝ 'ի վեր բանի դրէք։ Զճահիլն և զերկչոտն՝ 'ի վեր մեծութեան մի դնէք։ Մեծք որ ոխս պահեն՝ փախերուք 'ի նոցանէ։ Ամէն իրայ՝ շուտ մի հա-ճատայք։ Զձեր ընտանիքն՝ սիրեցէք։

## ԺԹ.

Ընդ հետ ուղղորդ սիրելեաց քիթ 'ի վեր մի կե-նայք։ Զազգականս ձեր՝ մի վիրաւորէք։ Մի թո-ղուք զձերայինսն՝ և 'ի յօտարըն շփանայք։ Զձեր հին սիրելին՝, մի մոռանայք։ Զձեր թշնամին՝ խիստ մի արհամարհէք։ Իմաստուն թշնամւոյ՝ խիստ մի վախենայք։ Զանգէտ սիրելին՝ մեծ մի գիտնայք։ 'Ի թշնամութեան՝ սիրոյ տեղի պահե-ցէք։ 'Ի սիրելութեան ժամն՝ զթշնամութիւն յիշեցէք։ Ծուլութեան արուեստ՝ մի ուսանիք։ Զձեր սիրե-լին՝ յաղքատութեան ժամն փընտռեցէք

## Ի

Գի հետ գիշատորին՝ մի գիշանայք։ Ամէն մարդ՝ թող զիւր չափն վայելէ։ Աշխարհս ձեզ խաղաղ թող չթուի։ Զհոգւոյ բաժինն 'ի մարմնաւորս՝ մի մոռանայք։ Զորդոյն ձեր հնարաւորութեամբ արո-ւեստ ուսուցէք։ Զձեր կերպարանն՝ 'ի սիրե-լեաց և 'ի թշնամեաց ծածուկ պահեցէք։ Զձեր խորհուրդն՝ ամէն մարդոյ մի ասէք։ 'Ի տեղի ուրուք՝ ականջ մի դնէք։

ԻԱ

ԻԱ

Զձեր խորհրդակիցն՝ ՚ի ժամանակի բարկութե՟ փորձեսջիք։ Զկին և զորդիս ՚ի ժամանակի աղքատութե՟՝ մի ուրանայք։ Առ մեծամեծքն՝ աչք ՚ի բաց կայցէք։ Ամէն իրաց՝ զչափն սիրեսջիք։ Զհպարտութի՟ քան զմահն այլ՝ դառն իմասջիք։ Զանհոգութի՟ ՚ի ձեզ՝ անկենդանութի՟ գիտասջիք։ Ընկեր զայն սիրեսջիք՝ որ իւրմէն իրք մի շահիք։

ԻԲ

Ի ժամանակի անհոգութե՟՝ քան ՚ի նեղութեան ժամանակին՝ այլ խիստ պատրաստ կայցէք։ Զամէն բան՝ ՚ի յառաւօտութե՟ ժամն հոգասջիք։ ՚Ի յաժնութե՟՝ զթանկութին յիշեսջիք։ Երբ առողջ կենայք՝ զհիւանդութին ՚ի միտ ածէք։ Զաղքիկն կամ զկին՝ ՚ի ձանաչ տեղայ առէք։ Զմարդ մէկ հեգ տեսանելով՝ մի փաթըրթուքիք։ Այնչափ սիրելեց ՚ի զատ կայցէք։ Եւ Քրի՟ մարդասիրին փառք յաւիտեանս յաւիտենից Ամէն։

# ԽՐԱՏՔ

Պիտանիք և օգտակարք. որ ասացեալ է Խիկարայ իմաստնոյ։

ԵՍ ԽԻԿԱՐՍ ԴՊԻՐ ԷԻ սենեքերիմայ արքային ասորեստանեայց. և առարի վաթսուն կինս. և շինեցի վաթսուն ապարանս. և ես խիկարս եղէ վաթսուն ամայ, և ոչ եղև ինձ որդի։ Յայնժամ մտի առ կուռսն բազում ընծայիւք. և վառեցի հուր և արկի խունկս զանուշահոտս 'ի վր̄ նց̄. մատուցի զընծայս, և զոհեցի զոհս վ̄ս ծննդեանն։ Եւ աղաչեցի ասելով. ով տեարք իմ և չ̄ք իմ բէլշիմ և շահմիմ. հրամայեցէք

մայեցէք եւ տուք ինձ արու զաւակ քանզի աՀա Խնկարս կենդանի՝ մեռանիմ։ Ել զինչ ասեն մարդիք թէ Խնկար իմաստուն էր եւ Ճարտար. մեռաւ՝ եւ ոչ կայ ինչ որդի, որ թաղէր զնա. եւ ոչ դուստր որ լայր զնա. զինչ ասեմ յունիմ ժառանգ յետ մահուան իմոյ։ Ել եթէ որդին իմ օրն 10 քան քարս ծախեսցէ, ոչ կարէ սպառել զինչս իմ. այլ զի միայն արկցէ հող ձեռօք իւրովք՝ ի վերայ իմ. եւ զի մի մնասցեմ անյիշատակ։ Յայնժամ ձայն եղեւ ՚ի Աստուծոյն իմոյ եւ ասէ։ Խնկար ոչ հրամայեալ է լինել քեզ զաւակ. բայց թէ առցես զՆաթան քեռ որդին քո, եւ սնուսցես զնա որդի քեզ. եւ նա հատուսցէ քեզ զանուն քո։ Ել ապա առի զՆաթան քեռ որդին իմ առ իս որ էր՝ ի մի ամի. եւ հագուցի նմա բեհեզս եւ ծիրանիս. եւ եդի մանեակ ոսկի՝ ի պարանոց նորա որպէս որդի թագաւորի. գեղաշուք զարդարեցի զնա. եւ արբուցի նմա կաթն եւ մեղր. եւ ննջեցուցանէի զնա՝ ի վերայ ալծուոց եւ պալանեաց իմոց մինչեւ եղեւ 7 ամաց։ Ել ապա սկսայ ուսուցանել նմա զդպրութիւն եւ զիմաստութիւն եւ զհանՃարագիտութիւն, եւ զպատասխանիս հրովարտակաց եւ զդարձուածս Հակառակ խօսից. եւ ՚ի տուէ եւ ՚ի գիշերի ոչ դադարէի ուսուցանելոյ. եւ յագեցուցի զնա ուսմամբ իբր հացիւ եւ ջրով։ Ապա ասէ արքայն առ իս՝ դպիր եւ իմաստուն Խնկար. Գիտեմ զի ծերացեալ ես. եւ յետ վախճանի քո ո՞վ է որ կատարէ Ճարտարութիւն եւ իմաստութիւն

դպրու-

կցորդս արքունեայ մերոյ. և ես հանապազ տըր-տումեմ վըն այդ խորհրդոյ: Պատասխանի ետու նմա և ասացի: Արքայ յաւիտեան կաց. է իմ որդի որ առաւել հանճարեղ և իմաստուն է քան զիս: Ասէ թագաւորն. ած՝ տայ առիս զի տեսից զնա: Եւ իբրև ածի զնա՝ կացուցի զնա առաջի թագաւորին: Յորժամ ետես թագաւորն զնա՝ ուրախ եղև և ասէ. այս օր օրհնեալ եղիցի. քան զի Խիկար ՝ի կենդանութե իւրում եհաս և կացոյց զորդին իւր առաջի իմ, և ինքն ՝ի հանգստեան եղիցի: Եւ ես երկրպագի արքային իմոյ, և առեալ տարայ զՆաթան յապարանս իմ. և այսպէս ասէի ՝ի խրատելն իմում:

---

Խրատք Խիկարայ զոր ետուր որդոյն իւրոյ Նաթանայ:

Որդեակ՝ եթէ լսես խօս ՝ի դուռն թագաւորաց և իշխանաց և մեծամեծաց՝ պահեա և մեռո՛ զնա ՝ի սրտի քում. և մի ասեր մարդոյ մինչև այլքն ասեն ՝ի քեզ:

Որդեակ՝ զմարդոյ կապած և մօհրածն մի արձակեր. և զարձակեալն մի կապեր:

Որդեակ՝ լաւ է իմաստուն մարդոյն հետ քար կրելն, քան զանգետին հետ ուտել և խմելն:

Որդեակ մի լիցի զի առաքեսցեն զքեզ ՝ի բան, և դու ոչ իմանաս զբանն և երթաս, յետոյ այլ ոք ուղարկեն որ երթայ ՝ի բանն, և դու ծաղր լինիս

Որդեակ

Որդեակ՝ մի այնպէս աներ որ երթաս՝ի տեղ մի և ՝ի քեզանէ մեծ մարդոյն ՝ի վեր նստիս. որ չասեն թէ եկու՛ ՝ի վայր որ յամօթ լինիս. ՝ի վայր նիստ՝ որ ասեն թէ եկու՛ ՝ի վեր։

Որդեակ՝ թէ ընկերն քո հիւանդ է մի ասեր ՝ի միտքդ թէ տանձ կամ խնձոր գտանում և առեալ երթամ ՝ի տես. երթ ոտիւք և տես աչօք. զի զհի-ւանդն դատարկ տեսանել շատ լաւ է քան զբա-զում կամակս ուտելոյ։

Որդեակ՝ մի հեղուր զարիւն մարդոյ. զի մի այլքն հեղցեն զարիւն քո։

Որդեակ՝ մի շնար ընդ այլոց կանանց, զի մի այլք շնասցեն ընդ կնոջ քոյ։

Որդեակ՝ լաւ է ծառային միամտութե՟ տալ զպա-տասխանի տն՟ իւրում, քան զոր խրատելով խօսի և ածէ ՝ի բարկութի՟։

Որդեակ՝ մի տար ընկերի կոխել զոտս քո, զի մի համարձակեսցի և կոխեսցէ զպարանոց քո։

Որդեակ՝ մի լինիր քաղցր որ կլանեն զքեզ. և մի լինիր լեղի որ թքանեն զքեզ։

Որդեակ՝ լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք. զի կոյրն արագ տեսանէ զերթ և եկն ճանապարհին. և մտօք կոյրն հանապազ գնայ կամակոր։

Որդեակ՝ լաւ է աղջիկ որ ծնանի և շուտ մեռանի, քան թէ ապրի և ազգին իւրոյ սև երեսանք բերէ։

Որդեակ լաւ է կողմ ՝ի ձեռին քում, քան թէ չորիք ՝ի յայլոց ձեռքն,

Որդեակ

Որդեակ՝ լաւ է ուլ մի՛ ի ձեռն տանն զենած, քան թէ եզ մի՛ ՚ի տունս այլոց։

Որդեակ՝ ՚ի յապարանս թագաւորաց մի մտաներ. և ընդ կնոջ դատաւորի մի խօսիր։

Որդեակ՝ աչք մարդոյ ագահէ ոչ կշտանայ զան ձուլ մինչև լցցի հողով։

Որդեակ՝ ընդ մարդոյ կնոջ մի խնամախօսիր. զի թէ գէշ լինի անիծանեն զքեզ. և թէ աղէկ լինի ոչ յիշեն զքեզ։

Որդեակ՝ յորժամ դատաստան երթաս մի շատա-խօս լինիր. և մի ծուռ զրուցեր, զի մի սուտ հանցեն զքեզ և մնասցես ՚ի զընտան։

Որդեակ՝ յառաջ զխօսքն ՚ի միտքդ խորհիր. թէ սուտ ես՝ մեղայ ասա. զի մի դատաւորն արկցէ ՚ի բանտ և թալանէ զինչս քո։

Որդեակ՝ զմարդն որ ՚ի կախել տանին՝ մի յառաջ նր ընթանայր, զի մի մտանէ զքեզ և ասէ թէ սա այլ իմ ընկեր է։

Որդեակ՝ յորժամ երթաս ՚ի հարսանիս կամ ՚ի մա-հատուն՝ յառաջ հայ կեր ՚ի տունդ, և ապա գնա. զի թէ հարսանիս է՝ ՚ի շատ խնդութեն հոգ չանեն զքեզ. և թէ մահատուն է՝ ՚ի շատ տրտմութեն մոռանան զքեզ և դու մնաս անօթի։

Որդեակ՝ կամուրջ մի հեռի գնալ անցանել լաւ է, քան մտանել ՚ի ջուր մօտիկ։

Որդեակ՝ նոր դատաստան մի սահմաներ անիրա-ւութը. թէպէտ և իշխան լինիս՝ ՚ի սահմանէ ՚ի դուրս։

դուրս մի ելնուր։

Որդեակ՝ մի բանար զաչս քո և տեսանէր զկին գեղեցիկ․ զի դեղեալ է զերեսն և ծարուրեալ է զաչսն․ և թէ վատնես զամ՛ ինչս քո 'ի սէր նո՛՝ ոչ ինչ առաւել գտանես քան զկնոջ քոյ․ բայց միայն զմեղքն և զսև երեսութիւն։

Որդեակ՝ թէ տեսանես Զերկաթասարդ մարդն թուլացեալ յօդս՝ մի հանաւատար գործոյն․ զի բան ծերոց հաստատ է․ բայց երկաթասարդ որդւոյն ո՞չ ահա օրինակ սորա տայեալ է, թէ իբր բերան առիւծու որ զերծուցանէ զնա։

Որդեակ՝ թէպէտ և որդին քո իմաստուն է՝ յառաջագոյն փորձեա՛ զնա, և ապա տուր զինչս քո 'ի ձեռն նո՛։

Որդեակ՝ 'ի կնոջէ յօտարէ և 'ի հարսնատունէ՛, քան զընկերսն յառաջ ել և գնա՛․ և այլ մի՛ դառնայր՝ որ հարկաւոր լինիս․ ապա թէ դառնաս՝, փոխարէն հարկայդ առնուս անարգութի՛։

Որդեակ՝ ա՛յլ ոք քան զքեզ ովլինդ երես է, մի հակառակիր ընդ նմա՛։

Որդեակ՝ թէ բարձր է տան շէմն քո առաւել քան ինն կանգունս՝ այլ՝ որ մտանես խոնարհեցո՛ զգլուխ քո։

Որդեակ՝ մի առնուր կշռով մեծ և ծախեր փոքր և ասեր 'ի սրտի քում թէ շահեցայ․ և ո՛չ գիտես որ փոխանակ 'ի յայն փոքր շահուն բարկանոյ ած․ և զոր ունիս՝ առնու 'ի ձեռայդ քոյ և տայ այլոյ։

Որդեակ

Որդեակ՝ մի երդնուր և մի ասեր սուտ. զի սուտ երդումն և սուտ ասելն՝ զմարդոյ կենաց պակասութիւն բերէ։

Որդեակ՝ եթէ կամիս խնդրել զանս ինչ յԱյ՚ի կամաց նր՛ մի հեռանար. և զոր խնդրես տացէ քեզ։

Որդեակ՝ քեզ զինչ բան որ չար թուի՝ ընկերին քում մի աներ և զոր ինչ բարին է կատարէ. և արասցես քեզ բարեկամ. և դու՝ յամենայն բարիս գտցես։

Որդեակ՝ յորժամ լինիս՚ի մէջ մարդկան՝ մի յայտներ զպարտքդ և զպակասութիդ քո զի՚ի նոցանէ շահ ոչ լինի քեզ և դու արհամարհիս՚ի մէջ նոցա։

Որդեակ՝ սիրեա՛ զկին քո զի մայրն քո է. և աշխատանօք սնուցանէ զորդիսն քո և կցորդ կենաց քոյ է։

Որդեակ՝ սիրեա՛ զեղբայր քո հաւասար ընդ քեզ. զի՚ի հատանիլ որդւոյ քոյ խնդասցես։

Որդեակ՝ ուսո՛ զորդին քո՚ի քաղց և՚ի ծարաւ, զի ուսանիցին համբերել նեղութեան. և յորժամ հանդիպի ժամանակ սովոյ՝ կարասցեն ժուժկալել։

Որդեակ՝ մարդոյ գործք որ ո՛չ է բարի և չունի անուն բարի յաշխարհի՝ լաւ է մարդն այն մեռեալ քան թէ կենդանի։

Որդեակ՝ յորժամ լինիս այլոց տան հիւր՝ եթէ օձ և կարիճ բերեն առաջի քոյ մի քալէջեան և մի դա՛նկատիր։

Որդեակ

Որդեակ՝ մի առներ չար բարեկամին քոյ· այլ ծիծաղեա ընդ երեսն նր· և դու ուրախ լինիս ՚ի մէջ ընկերաց քոյ։

Որդեակ՝ զամ բարութի կենցքոյ արա· բայց ըզ խորհուրդ սրտի քոյ մի յայտներ· զի կինն բնութբ տկար է և ոչ կարէ պահել զբան քո· այլ յայտնէ դրացեաց քոյ, և դու անկանիս ՚ի փորձանս և ՚ի նեղութի։

Որդեակ՝ մին ափերանք որ քո չէ, մի առնուր և տար այլոց։

Որդեակ՝ խորհեա զբանն ՚ի սիրտդ՝ ընտրեա զպիտանին, և ապա բեր ՚ի լեզուդ և՚խօսիր. և թէ զինչ գայ բերանդ խօսիս՝ նա ծաղր լինիս։

Որդեակ՝ երկու մարդ ընդ կռուելն և ընդ ծեծուելն՝ ՚ի մէջ նց մի անկանիր, զի մի ՚ի դուր մեռանիցիս։

Որդեակ՝ մի դատաւորկարանութի խօսիր և ծիծաղիր· զի մարդն ՚ի նուաստագոյն կռիւ լինի· և ՚ի կռուոյն ըսպանութի։

Որդեակ՝ թէ կամիս իմաստուն լինել՝ պահեա զլեզուդ քո ՚ի չար խօսից։

Որդեակ՝ թէ կանչելով մարդ տուն չինէր. նա էշն օրն ութն դարպաս կու չինէր· և թէ ՚ի սաստիկ զօրութէ եզին վարէր լուծն՝ նա ՚ի պարս նույէն ոչ ելանէր

Որդեակ՝ թէ աղքատ եղբայրանուրս պատառով դաս ու մի հեռանար։

Որդեակ

Որդեակ՝ մի տայցես ապրանս առանց գնի և վկայի
զի թագում խօսք լինի և 'ի քուն բարեկամէն
քակտիս։

Որդեակ՝ պատուեա՛ զհայր քո և զմայր. զի 'ի
հասանիլ յորդւոց քոց՝ առցես և դու զնոյն։

Որդեակ՝ շալկեցի աղջիկ ներկած չէր ծանր
քան զպարտքն. թէպէտ ուտէի և ըմպէի՝ ոչ
կարէի հանգչիլ մինչև վճարէի։

Որդեակ՝ մեծատան որդին թէ օձ ուտէ՝ կասեն
թէ վ̃ն բժշկութե̃ կերաւ. և թէ աղքատին ուտէ
կասեն թէ սովալլուկ մեռանելոյն կերաւ։

Որդեակ՝ լաւ է կողոպ տալ զա̃մ ինչս քո, քան
թէ գտանեն մէկ գողութի̃ 'ի վ̃ր քո։

Որդեակ՝ ընդ թշնամւոյն կորստեան մի խնդայցես
զի առաջի քո մահ կայ։

Որդեակ՝ յորժամ տեսանես զծերն, յոտն կաց և
պատուեա՛ զնա. զի և այլք զնոյն արասցեն քեզ։

Որդեակ՝ թէ դադարի գետն 'ի գնացիցն կամ քաղ-
ցրանայ ո̃չ զմեղու. և կամ սպիտակի զագռաւն
ո̃չ զաղաւնին՝ նա այնպէս թողու անզգամն զան-
զգամութի̃ իւր. կամ անմիտն լինիլ զգայուն։

Որդեակ՝ մի յաճախեր 'ի տուն բարեկամին քո,
զի մի յագեալ ատիցեն զքեզ։

Որդեակ՝ օրինաց ա̃յ ունկնդիր լեր. զի պատուի-
րանն ա̃յ ամուր պարիսպ է մարդոյ։

Որդեակ՝ սովորեցո՛ զլեզու քո զբարին խօսիլ
'ի մէջ ընկերաց քոց։

Որդեակ

Որդեակ՝ թէ խրատ բարի գտցես դու իմաստուն կոչիս. զի չարն հանապազ 'ի չար մարդէն ծնանի։

Որդեակ՝ թէ կամիս զգործս ինչ բարիս գործել՝ յառաջ մի պարծիր՝ լինի թէ չլինի, կամ չկարենաս գործել՝ ի ծաղր լինիս։

Որդեակ՝ մի ցանկանար մարդոյ արեան. և մի սիրեր զկռիւ. այլ սիրեա՛ զխօսս կակուղ. և խօսք՝ որ շիջուցանէ զհրաբորբոք գազանացեալ սիրտ մարդոյ։

Որդեակ՝ յորժամ խմես գինի՝ մի շատախօս լինիր. զի 'ի շատ խօսից կռիւ լինի և յետոյ խռովութիւն և սպանութիւն։

Որդեակ՝ խաղաղութիւն մայր է ամ բնական ողջունի խոնարհութիւն։

Որդեակ՝ մինչ կօշիկդ 'ի յոտքդ է՝ կոխեա՛ ըզփուշն. և այս ճանապարհ ընկերի քումոյ ընդ քեզ է գալոյ։

Որդեակ՝ ջանա՛ և շահիր անուն բարի, զի լաւ է մարդոյն անուն բարի, քան թէ զգեղ գովելի. զի գեղեցկութիւն հիւանդութեամբ և մահուամբ ապականի. և անուն բարի յաւիտեան մնայ։

Որդեակ՝ թէ հանդիպիս կնոջ անզգամի՝ հնազանդիր նմա. և կամ փախիր 'ի նմանէ։

Որդեակ՝ 'ի լեզուէ քումմէ փախիր քան զօտար թշնամւոյ. զի այլոք ոչ կարէ հարկանել զքեզ եթէ ոչ զնա։

Որդեակ՝ լաւագոյն է քեզ թշնամութիւն ընդ առն իմաստնոյ

իմաստնոյ, քան թէ սիրելութիւն ընդ առն անմտին:
Որդեակ՝ զայր անմիտ և արբեցօղ՝ ի բան մի՛ ղրկեր. և թէ կուզես որ բազում չարիս ածէ ՚ի վերայ քո՛, ուղարկես:
Որդեակ՝ անմիտ մարդոյ խրատ տալն այնպէս է, որպէս թէ ոք փոշեկանէ ՚ի գնացման գետոյ:
Որդեակ՝ զչար և զանմիտ և զլեզուանին և զամ ամբարշտաւոր մարդն, ՚ի քո տունն մի՛ մտոյներ. զի ՚ի գործոյ նոցա ամօթով գտանիս:
Որդեակ՝ թէ լինիս տէր ձի, զմահն քո մի՛ մոռանար:
Որդեակ՝ ա՛ծ զգինի մի ուրախութեան. բայց տես՛ մի՛ լինի թէ ըմպէ գինին զքեզ:
Որդեակ՝ փառաւոր առնէ երբեմն գինին զմարդն, և երբեմն յամօթալից ծաղր առնէ:
Որդեակ՝ լաւ է կռուիլ քեզ ընդ մարդոյ գիտնաւորի, քան թէ կնոջ անզգամի.
Որդեակ՝ մարդ չարաբարոյ և ամբարտաւան՝ յոր ժամ տեսանէ զկրուութիւն ընկերի իւրոյ, ցնծայ և ուրախ լինի. և կարծէ ՚ի մտի իւրում թէ, փառս ինչ յաւելաւ ՚ինմա:
Որդեակ՝ յորժամ քաղցրանայ աչք մդոյ ՚ի վրյ քո՛ առաւել երկնչիր ՚ի նմանէ. զի յետոյ մեղադրես յանձին քում:
Որդեակ՝ յորժամ տեսանես զքեզ առ աչս տնոյ քո՛ թագաւորայ փառաւորելի եղեր, և զամ մարդ սիրէ զքեզ. և յորժամ արհամարհիս յայ՝ յայն-ժամ

ժամ թագաւորք և իշխանք և ամ սիրելիք քո առեն զքեզ։

Որդեակ՝ մի ասեր աղքատին թէ դու ինչ չար ոչ կարես առնել. տես զի բազում չարիք և անարգանք յոչ ինչ մարդկանէ եղանեն և յոչ պատուական մարդկանց։

Որդեակ՝ կին օտար որ սիրէ զքեզ և ասէ թէ դու լաւ ես քան զիմ այրն՝ մի հաւատար նմա. զի կին պոռնիկ նման է շան որ խառնակի ընդ ամ շանց։

Որդեակ՝ մի փախչուցաներ զխրատ քո ՚ի հետ նոր բռնած սիրելւոյդ՝ մինչև քանի մի ինչ անգամ փորձես զնա չարեօք և բարեօք։

Որդեակ՝ կին պոռնիկ նման է գերեզմանի բուելոյ որ ՚ի ներքս լի է գարշահոտութե։

Որդեակ՝ մի լրբաբեզու լինիր ՚ի մէջ ընկերացդ, և կարծեր թէ սիրելի ես նց. այլ յորժամ յանդէմանեն զքեզ՝ լինի բան քո ամօթալից։

Որդեակ՝ որ պայծառ է մօք՝ իբրև զարեգակն լուսաւոր է. և որ պիղծ է սրտիւ և նենգ է մօք և խաւար է խորհրդովն կամաց մօք այնպիսի մարդն թէ պէտ և ունի ինչս բազումս ունայն է և կենդանի մեռեալ։

Որդեակ՝ յաւուր զոհից քոց առաջ բերէ ընդ ձեռքդ, որ աչք մարդոյն ՚ի ձեռն քո չմնայ. քանզի ոչ հաճի ած, և դու ՚ի մարդկանէ անարգիս։

Որդեակ՝ մին ձի որ քո չէ մի հեծնուր. և կամ

յոյժ

յոյժ քաղցեալ իցես՝ հաց որ քո չէ մի՛ ուտեր։

Որդեակ՝ յայտնեա՛ զխորհուրդ քո բարեկամին քում. և յետ քանի մի աւուրց փորձեա՛ զնա և սակաւ մի կռուիր ընդ նմա. թէ որ պահէ զբան քո՛ ՚ի սրտի իւրում և ո՛չ յայտնէ՝ նա սիրելի բարեկամ քո է, զնա սիրեա՛ յոյժ. և թէ ընդ կռուիլն յայտնէ զբանս քո՝ նա այնպիսին չէ սիրելի և բարեկամ, փախիր ՚ի նմանէ։

Որդեակ՝ ագահութիւն մայր է ամ̃ չարեաց և ծնուցիչ ամ̃ մեղաց բայց ողորմութիւն ձեռնտու է ամ̃ բարեաց։

Որդեակ՝ որ սիրես զխաղաղութիւն, ՚ի դատաստանէ պատրաստ կաց. և որ հանապազ յօժարի ՚ի դատաստան՝ նա մայր է ամ̃ մեղաց և չարեաց. յիմարեալ է և ո՛չ գիտէ զինչ առնէ։

Որդեակ՝ զչարախօսութիւն զումեքէ մի՛ ասեր և մի՛ լսեր. զի կարի խոցէ զսիրտ մարդոյն. և պատկանէ զփառք մարդոյն. զի մեծ նախատինք է։

Որդեակ՝ թէ կամիս մարդոյ զինչ տալ՝ յառաջ մի՛ պարծենար և մի՛ խոստանար. և թէ պարծենաս և չտաս հետ բարեկամին թշնամի լինիս։

Որդեակ՝ ամբարտաւան մարդն հեռի է և օտար յընտանեաց և ՚ի բարեկամաց իւրոց. և թէ բազում անգամ ջանայ սիրել՝ նա առնու անարգանս անձին իւրոյ և հեռանայ յընկերացն։

Որդեակ՝ լաւ է ստանալ ձի սրմակել և է շրդավարուք, քան թէ ծառայ փախչօղ և սրտատայ։

Որդեակ

Որդեակ՝ միերաշխաւոր լինիր բարեկամին քոյ, զի բազում վիշտ կրես մինչև վճարես զպարտս նր։
Որդեակ՝ մարդ չարախորհուրդ և նախանձոտ, ոչ թէ միայն ատելեացն ոտն է զչարութի․ այլ և բնութե ամենայն հակառակ կայ։
Որդեակ՝ լերինք՝ շտեմարանք սառնից են․ և նենգ գաւառք՝ բնակարան չարեաց են։
Որդեակ՝ մի այլոց կանանց կարօտեր զգանկութի քո․ զի օտար կինն նման է աղի ջրի․ որ որքան խմես՝ առաւելագոյն ծարաւիս․ և զանուն վատ ժառանգես։
Որդեակ՝ զի որ իմաստունն է՝ նման է ոպ հուր 'ի լոյս և 'ի տապոյ բորբոքի․ և ոպ արեգակն 'ի ճառագայթից երևի և լուսաւորէ զաշխարհս․ և կամ ոպ առիւծն որ ուժեղութեն գովի․ և ոպ բազայն 'ի սրընթաց առ 'ի չուչելոյ թևոյն գովի, ես առաւել մեծարի 'ի յաչս թագաւորաց և մեծամեծաց։
Որդեակ՝ առն խոզամտի ոչ գոյ սիրելի երբէք զի աւէ 'ի սրտի իւրում թէ՝ կեանքս ոչ անցանի, և ըղձանս ոչ պակասի․ և ոչ գիտէ թէ ամէն տայ այնպիսեաց մահ․ և զինչ նր այլոյ տայ․ և չու նենայ անուն բարի՝ որ յիշեն զնա։
Որդեակ՝ այր անմիտ յորժամ արբենայ, յօժարի 'ի կռուիւ․ և կարծէ 'ի միտս իւր թէ, չկայ մեծագոյն քան զիս․ և ոչ գիտէ թէ յորժամ հանդիպի առ ոմն քաջ՝ ապականէ զինքն։
Որդեակ՝ ոպ հողն մայր է ամենեցունց․ նոյնպէս
և

եւ արբեցութիւն մայր է ամենայն չարեաց։
Որդեակ՝ թէ իշխան ես ձի և մարդկան՝ պահեա զանձն քո 'ի զեղխութենէ վս զի 'ի զեղխեն հոգք եր կրաւորաց եմ։

Որդեակ՝ առեր զգառն կապեալ որ արձակեցաւ 'ի վր իմ՝ և ոչ վախեցայ 'ի նմանէ. Համբերե ցայ Թշնամւոյ իմոյ՝ և ոչ յաղթեաց զիս. Համբերե ցեցայ կնոջ լեզուանւոյ՝ և յաղթեցայ 'ի նմանէ։

Որդեակ՝ մի լինիր փոյթ իբրև զնշենի որ յառաջ ծաղկի և ապա ուտի, այլ լեր հնազանդ՝ և պտղաբերեա զհեզութիւն։

Որդեակ՝ անկանի անօրէնն վասն չար գործոյ իւրոյ, և կանգնի արդարն վս բարի գործոյ իւրոյ։
Որդեակ՝ իմ Նաթան՝ զայս ամ զոր ուսուցի քեզ 'ի միտ առ և կատարեա զամ. և լինիս իմաստուն 'ի մէջ ընկերաց քոց. և 'ի աչս թագաւորաց երևելի լինիս։

Այս է խրատն զոր ուսուցի որդւոյն իմոյ Նաթանայ. և ես Խիկար դպրապետ թէ՝ զամ խրատս իմ պահեսցէ 'ի սրտի իւրում. այլ նա ոչ զինչ լուաւ 'ի վր եղման պետոյ և կործանէր այնպէս որպէս զխոր տոր իմ։ Յառաջ տանէր զտունս իմ նր, և զծառայ քըս իմ. զինչս և զապարանս և զիշխանութիւն իմ. և զարարն ատենադպիր սենեքերիմ արքային իմոյ։ Եւ նա մոռացաւ վաղվաղակի զխրատս իմ. և սկսաւ չարիս գործել և առնել անիրաւութիւն. զծառայս իմ ոչ խնայէր, և զինչս իմ վատնէր. և զբազում խրատս

խրատս իմ անտես արար։ Եւ ես Խիկարս յորժամ տեսի զչարութիւնն Նաթանայ՝ գնացի առ թագաւորն իմ Սենեքերիմ, և պատմեցի նմա մի ըստ միոջէ ըզչարութիւն Նաթանայ։ և խնդրեցի թուղթ՝ ի թագաւորէն զի մի իշխեսցէ Նաթան մերձենալ ընչից իմոց։ Եւ հրամայեաց թագաւորն որ քերին զՆաթան. և ետուր պատուէր նմա ոչ մերձենալ ընչից իմոց։ Եւ ես Խիկարս եկեալ գնացի՝ ի տուն իմ։ Եւ Նաթան սկսաւ միտք չարիս գործել վասն ինձ՝ ի դուռն թագաւորին. և խորհեալ շինեաց մոհր մի ըստ նմանութեան իմ մօհրին. քանզի յառաջագոյն գիտէր զկերպ մօհրին իմոյ. և փորեաց զիմ անունս և կոխեաց՝ ի թղթի միոյ. և գրեալ յիմ բերանէ առ փարաւոն արքայն եգիպտացւոյ. որ չար կամէր ընդ հետ իմ թագաւորին Սենեքերիմայ։

---

Եւ էր գրեալ այսպէս։



Խիկար իմաստնասիրէ ողջոյն ը̅ քեզ փարաւօն արքայ. յորժամ գիրս առ քեզ հասանի՝ փութով ժողովէ զզօրքդ, և եկ՝ ի դաշտն արծրունեաց որ՝ ի հրոտից ամսոյն 27 լինի. և առցես զ Սենեքերիմ թագաւորն առանց պատերազմի Եւ յորժամ գրեաց Նաթան այսպէս՝ խորհեցաւ և գրեաց թուղթ մի այլ նման սորա՝ իմ թագաւորին բերանէն՝ առ իս։

Եւ

Եւ էր գրեալ այսպէս։

Սենեքերիմ արքայէ ողջոյն ընդ քեզ սիրելի և իմաստուն իմ խիկար. յորժամ գիրս առ քեզ հասանի՝ փութով ժողովեա զզօրքդ բազում, և եկ 'ի դաշտն արծրունեաց որ 'ի հրոտից ամսոյն 27 լինի. զի պատերազմեսցեն ընդ հետ զօրօք փարաւոնի. քանզի դեսպանք փարաւոնի եկեալ են առ իս։ Եւ յորժամ գրեաց այսպէս՝ գաղտնաբար տարեալ ետուր հաւատարիմ մարդոյ որ բերեալ հասուսցէ 'ի ձեռս իմ խիկարայ։ Եւ ես խիկար յորժամ առի զթուղթն՝ բացի և կարդացի զոր գրեալն էր. և վաղվաղակի ժողովեցի զօրք. և կատարեցի զհրամայեալն 'ի թագաւորէն անմեղութբ, և ոչ գիտացի զչարութի նաթանայ որ առ իս։ Եւ զմիւս թուղթն զոր գրեալ էր իմ բերանէն առ փարաւոն արքայն, զայն կնքեալ և տարեալ ձգեաց գաղտնաբար 'ի դուռն դարպասի թագաւորին։ Եւ գտեալ մի ոմն 'ի ծառայից զթուղթն՝ տարեալ ետուր 'ի ձեռն սենեքերիմ արքայի իմոյ։ Եւ իբրև բացեալ կարդացին զթուղթն առաջի թագաւորի՝ զահի հարեալ լի եղև տրտմութբ և ոչ գիտէր զինչ առնիցէ խիկարիս։ Յայնժամ նաթան որ դպիր էր թագաւորին՝ եմուտ առ թագաւորն և երկրպագեաց և ասէ։ Ողջ լեր արքայ և տէր իմ. զի հայր իմ խիկար ոչ գիտաց զերախտիքս քո և կամի խափանել զթագաւորութիւն քո. և եթէ ոչ

հա

հա՛տատաս քանիս՝ կայցուք մինչև որ կատարի թի՛ւն 'ի Հրոտից 27․ և ելցուք և գնասցուք դաշտին արծրունեաց․ և տեսցուք աչօք մերովք զերախտամոռացութիւն խիկարայ որ առ քեզ։

Յայնժամ սենեքերիմ թագաւորն երկմտեալ կայր տրտմութ͞ք մինչև եղև 'ի Հրոտից ամսոյն 27 Ե՛ւ ես խիկարս արարի զզօրս իմ․ և եկեալ բնակեցայ 'ի դաշտին արծրունեաց։ Ե՛ւ ելեալ թագաւորն սենեքերիմ գայր 'ի դաշտն արծրունեաց փորձել զիս։ Ե՛ւ ես խիկարս յորժամ տեսի զզօրքն սենեքերիմայ՝ խաղս արարեալ խաղայի 'ի մէջ դաշտին ընդդէմ յանդիման զօրօք ն͞ց պատերազմիլ․ քանզի կարծէի թէ զօրք փարաւոնի է։ Յայնժամ տեսեալ սենեքերիմ զզօրքն իմ, փախստական եղև․ և ես գնայի զօրօք փոքր ինչ յետև նր և ոչ գտի․ դարձայ և եկի 'ի յօթևանս իմ․ և ուրախացեալ մտօք իմովք թէ փախուցի զփարաւոն զօրօք իւրովք։ Ե՛ւ յորժամ գնաց սենեքերիմ փախստական 'ի դարպասն իւր՝ խելագարեալ լի տրտմութ͞ք և ոչ գիտէր զինչ գործէր խիկարիս որդմնունէր։ Յայնժամ եմուտ նաթան առ թագաւորն․ ողջունեց և ասէ․ ահա տեսար աչօքդ զերախտամոռացութի խիկարայ․ այժմ մի տրտմիր զի ես ածեմ զհայրն իմ խիկար առաջի քո։ Ե՛ւ ասէ սենեքերիմ նաթանին թէ դու բերես զխիկար և տաս 'ի ձեռս իմ, զոր ինչ խնդրեսցես տաց քեզ։ Ե՛ւ երկրպագեալ նաթան ել արտաքս և գնաց․ Ե՛ւ գրեաց թուղթ մի 'ի թագաւորին

ւորին բերինեն. և ետուր ցհաւատարիմ մարդ մի ասելով թէ՝ տարեալ տայցես զայս 'ի ձեռն Խիկարայ, զոր էր գրեալ այսպէս։ Սենեքերիմ արքայէ ողջոյն ընդ քեզ սիրելի և իմաստուն իմ Խիկար․ քանզի յոյժ հաճոյ թուեցաւ թագաւորիս Սենեքերիմայ զերախտիքն քո․ և զի փախեան զօրք փարաւոնի յերեսաց քոց․ այժմ տուր հրաման զօրաց քոց գնալ խաղաղութեամբ 'ի տունս իւրեանց․ և դու եկ և եկ զի ուրախ եղէց ընդ քեզ։ Եւ ես Խիկար յոր ժամ կարդացի՝ ուրախ եղէ յոյժ․ և տուի հրաման զօրաց իմոց գնալ 'ի յօթևանս իւրեանց։ Եւ ես ելեալ գնացի տեսանել և ուրախ լինիլ ընդ թա-ւորին իմոյ։ Եւ յորժամ հասի միամտութեամբ 'ի դուռն թագաւորին․ տեսեալ զիս զինուորացն՝ ընթա-ցեալ տարան ածին առաջի թագաւորին։ Եւ յոր ժամ ետես թագաւորն զիս՝ լի եղև տրտմութեամբ․ և հրամայեաց որ ետուն զայն թուղթն 'ի ձեռս իմ։ Եւ ես երբ բացեալ կարդացի՝ նա յայնժամ կապեցաւ լեզուս և գնաց իմաստութիւնս և ոչ գիտէի զինչ պատասխանեմ Սենեքերիմայ։ Այլ ողոքանօք ասացի՝ արքայ և տէր իմ մի 'ի զուր դատեր զիս զի չունիմ խապար 'ի յայս բանէս այլ անպարտ եմ։ Եւ ոչ եդ ունկն աղաչանաց իմոց․ այլ հրամայեաց սպանանել զիս։ Յայնժամ Նաթան քեռորդին իմ կապեաց զձեռս 'ի յետս փոխանակ բարի խրատոյն իմոյ զոր յառաջն տուի․ թէ ուղղեալ՝ զարձակեալն մի կապեսցես․ նա յառաջ

զիս

զիս կապեալ։ Եւ ես դարձեալ աղաչէի թագա-
ւորին իմոյ թէ՝ տո՛ւր զիս ՚ի ձեռն աբուսամաքայ
զօրապետին. և նա տարեալ զիս ՚ի տունս իմ և ՚ի
վե՛ր շեմանց իմոց կատարէ զհրամանս քո և զիս
գլխատէ. և գգլուխն իմ. 100 կանգուն հեռի
թաղէ ՚ի մարմնոյս։ Եւ հրամայեաց թագաւորն ա-
բուսամաքայ կատարել այնպէս, զոր խնդրէի։
Եւ կալեալ զիս աբուսամաքայ տանիլ ՚ի յըսպա-
նումն. և ես խիկարս ըրկեցի գաղտնաբար խապար
առ աբեստամ կինն իմ, թէ պատրաստէ հազար
աղջիկս, և արա՛ կերակուրս ազգի ազգի. և յոր-
ժամ եկեսցեն ՚ի յըսպանումն իմ, արա՛ ընթրիս, և
բե՛ր զայն հազար կոյս աղջկունս որ լայցեն զմահն
իմ. և կինն իմ վաղվաղակի կատարեաց զհրամանս
իմ։ Եւ յորժամ գնացաք հասաք ՚ի տունս իմ, խնդ-
րեցի աղաչանօք յաբուսամաքայ զօրապետէն և ասա-
ցի, Տո՛ւր ինձ ըզհրամանս որ առնուցում ընթրիս
առ սիրելիս և առ բարեկամսն իմ փոքր ինչ. քան
զի այլ ո՛չ մնամ կենդանի։ Եւ ասաց աբուսամաք՝
արա՛ որպէս և կամիս. և արարի ընթրիս մեծ սիրե-
լեաց իմոց որք եկեալ էին ՚ի սպանումն իմ. և բերի
կերակուրս զանազան, և զգինիս անապակս նաև
զհազար աղջկունսն որք լայցեն առաջի նց զմահն
իմ։ Եւ նոքա ՚ի սաստիկ տրտմութենէն և արբեալ
՚ի գինւոյն՝ արբեցեան ամենեքեան, և ննջեալ
քնեցան։ Եւ ես խիկարս կայի կապեալ երկա-
թեօք. և գնացեալ զարթուցի զաբուսամաք զօրա-
պետն.

պետն, և ողջագանօք ասացին մա: Գիտե՛ս եղբայր
զի այն ժամանակն որ երբ բարկացաւ Թագաւորն
՚ի վերայ քո, և ես ՚ի ձեռս իմ թէ տար սպան զաբուս
մաք, և ես առեալ տարայ զքեզ և ոչ սպանի, այլ-
պահեցի գաղտ. և եկեալ ասացի Թագաւորին թէ
սպանի զաբուսմաքն: Եւ յորժամ անցաւ փոքր
ժամանակ ՚ի վերայ, գնաց բարկութիւն Թագաւորին,
և փոշիման եղև սպանանելն զքեզ: Եւ ասաց՝ ա-
ճառ քեզ աբուսմաք զի դու կենդանի պահեցիր:
Եւ ես երբ լուայ զայս ՚ի Թագաւորէն՝ եկեալ
հանի զքեզ և տարայ առաջի Թագաւորին և բա-
զում պարգևս առի: Այժմ աղաչեմ զքեզ արաս
ցես փոխարէն առիս. և կայ ՚ի ներքև չէմանց իմոյ
հոր մի մեծ. ձգեա զիս ՚ի հորն գաղտնաբար. և
ես ունիմ ծառայ մի մահապարտ. քանզի է մար-
դասպան. և առա կապեալ կայ ՚ի բանտն. և ունի
զնմանութիս իմ. հագո՛ նմա զհանդերձս իմ, և զար
թո՛ զժողովուրդ իմ. և շուտով կտրեա զգլուխն.
և տար թաղէ զգլուխն 100 կանգուն հեռի ՚ի մար
մնոյն: Եւ եղև ունկնդիր աբուսմաք խնդրուա
ծայ խիկարիս և արար այնպէս. և գնաց առ Թագա
ւորն թէ՝ սպանեցի զխիկար. և յոյժ ուրախա-
ցաւ Թագաւորն ՚ի սպանումն իմ: Եւ ապա գնաց
նաթան խնդրել ՚ի Թագաւորէն հոլովելոյ
զստացուածս իմ. և Թագաւորն հրամայեաց տալ
նաթանայ զամ ինչս իմ: Եւ գայր նաթան ՚ի տունն
իմ հանապազ. ուտէր և ըմպէր և աղտեղէր զծա-
ռայքս

ւայքս իմ և զպալատնեայքս իմ. և կամէր չարիս գործել ընդ հետ կնոջ իմոյ. և կինն իմ ոչ հնազանդէր կամաց նր: Եւ ես զայնն լուեալ ականջօք իմովք. զձայնն գուսանայ. և զպատշօտիլն ընդ կնոջ իմոյ. և խնդրէր օր նմա և ոչ գտանէր: Եւ յորժամ անցաւ ժամանակ մի, լուեց փարաւոն արքայն եգիպտացւոց եթէ սենեքերիմ արքային սպանեց զխիկար, յոյժ ուրախացաւ: Եւ առաքեաց փարաւոն գիր առ սենեքերիմ:

### Եւ էր գրեալ այսպէս:

Արքայ փարաւոնէ ողջունիւ ծանիր սենեքերիմ թագաւոր. քանզի կամիմ շինել դարպաս մի 'ի յօդս երկնից անսուն և անգերան. ղրկէ ինձ ճարտար մէյմար մի որ եկեալ շուտով կատարէ զհրամանս իմ. և թէ ոչ ղրկես՝ գամ քազում հեծելօք և աւերեմ զերկիրդ. և առնում 'ի քէն հարկ. Եւ յորժամ բերեալ ետուն զթուղթն 'ի ձեռն սենեքերիմայ՝ բացեալ կարդայ զնա. և իսկոյն զարհուրեցաւ բոլոր անձն նր 'ի բանից փարաւոնի: Եւ կոչեաց զմեծամեծս և զիմաստունս և զդպիրս և ասէ՝ քանզի սպանեցաք զխիկար, այլ ով կարէ տալ պատասխանի փարաւոնի: Եւ ասացին մեծամեծքն՝ արքայ յաւիտեան կաց. քանզի աստ կայ որ դեգիր խիկարայ նաթան որ առաւել հանճարեղ և իմաստուն է քան զխիկար, և նա կարէ տալ պատասխանի գրոյս: Եւ հրամայեաց թագաւորն կոչել զնաթան. և բերեալ եկին՝ ետուն զթուղթն 'ի ձեռն

ձեռն և կարդայ։ Ասէ Թագաւորն՝ կարօղ ես տալ պատասխանի փարաւօնի. և ասէ Նաթան՝ այս անհնարին է 'ի մարդկանէ Յայնժամ տարակուսեալ սենեքերիմ կործէր զանձն իւր ասելով՝ աւաղ քեզ խիկար իմաստուն իմ՝ զի սպանեցաք զքեզ. այժմ ոչ կարեմք տալ պատասխանի, և կրեմք վիշտ բազում 'ի նմանէ։ Եւ եթէ ոք բերէ զքեզ կենդանի առաջի իմ խիկար՝ տաց նմա կշռանօք քո ոսկի։ Եւ լուեալ աբուսմաք՝ երկիրպագ Թագաւորին և ասէ՝ ողջ լեր արքայ իմ. զի թէպէտ կոծաս 'ի վերայ սպանման խիկարայ, այլ եթէ ոք բերէ զխիկար կենդանի առաջի քո փոխանակ նորա սպանանես զնա։ Եւ ասէ Թագաւորն՝ ոչ սպանանեմ զնա, այլ տամ պարգևս ազխնանմա։

Եւ երկրպագեալ աբուսմաք Թագաւորին՝ եկեալ վաղվաղակի եհան զնա 'ի հորէն. և տարեալ կացոյց առաջի սենեքերիմայ։ Եւ յորժամ ետես Թագաւորն զնա կենդանի՝ յարեաւ յաթոռոյն և անկաւ զպարանոցաւ իմով և համբուրեաց զնա և ասաց. ով խիկար՝ մեռեալ էիր և կենդանացար։ Եւ յոյժ ուրախ եղև Թագաւորն. և ետուր պարգևս մեծամեծս աբուսմաքայ զօրապետին՝ և հրամայեաց պատուել զնա աւուրս 40. և յետ լրման 40 աւուրց հրամայեաց Թագաւորն բերել զնա առաջի իւրն. և ետուր կարդալ նմա զթուղթն փարաւօնի։ Եւ յորժամ կարդայր ես խիկարս՝ ասացի առ Թագաւորն՝ մի տրտմիր և մի կործար զի ես երթամ և

տամ

տամ պատասխանիս փարաւոնի, և առնում հաց
կը՝ ի նմանէ և գամ: Եւ իբրև լուաւ թագաւորն
իմ յորժուրալս եղև 'ի քանից իմոյ: Եւ ապա ես
խիկար՝ առաքեցի պատուէր առ աքեստան կին
իմ, թէ բռնէ 2 ձագս արծուոյ. և մանել տուր
պարան մի երկայն. և բերել տուր 2 ծծկեր տղայ.
և 2 կին որ պահեն զտղայքն. Եւ ուսոյ տղայոցն
կանչել կամ ծեփ աղխաս բերէք. և ամէն օր կպէ
զերկու տղայքն 'ի վր̃ արծուոյ ձագին, և թռո
'ի յօդն պարանաւն և իջո 'ի վայր, մինչև կատարել
ուսանին զելանելն և զիջանելն և զբարբառելն:
Եւ կինն իմ իմաստուն էր և փութով կատարեաց
զհրամայեալն իմ: Եւ ես առի հրամանս 'ի թագա
ւորէն իմոյ. և ելեալ գնացի 'ի տունն իմ: Եւ առի
զերկու տղայքն և զձագ արծուներոյն՝ և եդի 'ի
սնտուկ մի, և ելեալ գնացի առ փարաւոն արքայն:
Եւ յորժամ հասայ յեգիպտոս՝ իջևանեցայ 'ի տուն
մի, և թողի անդ զսնտուկն 'ի տանն զոր իջևանել
էի. և ես գնացի առաջի փարաւոնի և երկրպագի
[illegible] ես դու.
[illegible]մ ուստի գաս: Եւ ես ասացի. արքայ յաւի-
տեան կաց. ահա ծառայ քո է որ առաքեաց սե-
նեքերիմ արքայն կատարել զհրամանս քո. և բե-
րեալ եմ ընդ իմ ճարտար մէ յմաց որ շինէ դար-
պաս 'ի յօդս: Եւ ասաց փարաւոն՝ զինչ է անուն
քո: Եւ ես ասեմ, աբիկամ է իմ անունն: Եւ
հարցեալ ցիս փարաւոն թէ զինչ պէտք է մե-

յմարդոյդ

'զմարդ 'ի պէտս դարպասին: Եւ ես ասացից նմա,
բերել տուր կամ ծեփ աղիւս: Եւ հրամայեսցէ
թագաւորն որ բերցին վաղվաղակի. և ես խիկարս
գնացի կապեցի զերկու տղայքն 'ի յերկու արծո-
ւոյ ձագին. և թռուցի դէպ 'ի յօդս: Եւ տղայքն
աղաղակեցին կանչելով, կամ ծեփ աղիւս բերէք
որ շինեմք զդարպասն: Եւ ո՛չ ոք կարէր հանել
ինչ 'ի վեր: Եւ ես ասեմ, հանեցէք զի մի դա-
տարկ մնամ: Եւ տեսեալ զայս զօրքն փարաւոնի՝
զարմացեան և անկան 'ի դարպասն. և պատմեցին փարա-
ւոնի զսքանչելիսն իմ: Եւ եկեալ փարաւոն 'ի
տես և աղաղակ տղայոցն 'ի յօդն. և զարմացաւ
յոյժ և ասաց 'ի միտ իւրում թէ՝ սա՛ շատ իմաս-
տութբ լաւէ քան զխիկար. և ո՛չ գիտէր թէ ես եմ
խիկարն: Եւ մտայ առ թագաւորն, և երկիրպագի
նմա: Եւ ասէ ցիս փարաւոն. երդմնեցուցանեմ
զքեզ զի ասես ինձ զստոյգն թէ ո՛վ ես դու: Եւ
ասացի ցնա թէ ես եմ խիկարն: Եւ ասէ փարաւոն
ո՛վ թշուառական կենդանացա՞ր: Եւ դարձեալ
ասէ. ո՛վ իմաստուն խիկար մեկնեա՛ ինձ զայս թէ
զինչ է սիւնն այն 'ի վր նր. մայրք երկոտասան 'ի
վր նորա. անուանք երեսուն 'ի վր անուանից. սու-
հանդակք 2 մինն սև և միւսն սպիտակ: Պատասխա-
նեցի և ասացի. սիւնն՝ տարին է. մայրք երկոտա-
սան՝ ամիսք տարւոյն է. անուանք երեսուն աւուրք
ամսոյն է. սուրհանդակք 2 տիւն և գիշերն է:
Եւ դարձեալ ասէ փարաւոն. ո՛վ խիկար մանէ ինձ

պարան

պարան աւաղէ ։ Ե՜ ես գնայի ծակի յորմն պատի միոյ դէմ յարևելս․ և ՚ի ծագել արևուն, անկա՛ շողն ՚ի ներս․ և ես առի աւազ և փոշի 2 ափս, և տայի դէմ արեգական, որ տանէր ոլոր ոլոր ծակէն ՚ի ներս ։ և ես կանչէի՝ կծկեք զպարան շուտով ։ Ե՜ զահի հարեալ փարաւոն ապուշ մնայ․ և կոչեալ զիս առ ինքն ետուր ինձ պարգևս ազնիւս և հարկս Թագաւորին իմոյ, և շնորհակալ եղև ՚ի նմանէ ։ Ե՜ ես խնկարս ելեալ եկի առ սենեքերիմ Թագաւորն իմ, և անկեալ համբուրեցի զոտս նորա․ և պատմեցի մի ըստ միոջէ զպատասխանիսն փարաւոնի․ այլ և զառաջի գրոյն զանմեղութիւն իմ ։ Ե՜ յորժամ լուա՛ զայս ամ, յայնժամ յոյժ ուրախ եղև սենեքերիմ ասելով․ խնկար իմաստուն իմ, այժմ ցնծութ․ ուրախ եմ ՚ի կենդանութի քո․ և զոր ինչ խնդրես յինէն՝ տաց քեզ ։ Ե՜ ես խնկարս շնորհակալ եղէ յարքայէս իմմէ և ասացի ոչ է պիտոյ ինձ գանձս վաստուն պատիւս․ բայց միայն զայս ինչ խնդրեմ ՚ի քէն․ զի զնաթան քեռորդին իմ որ է որդեգիր ինձ և աշակերտ՝ հրամանա՛ քո տայցես ինձ․ զի ուսուցի այլ կայ պակաս զայն ես ուսուցանեմ որ լինի կատարեալ ։ Ե՜ հրամայեաց Թագաւորն տալ զնաթան ՚ի ձեռս իմ․ և ասէ զոր ինչ կամիս՝ արա դմա ։ Ե՜ ես կալայ զնաթան և տարայ ՚ի տուն իմ․ և սկսայ ասել ցնա այսպէս ։

Որդեակ՝ իմ նաթան՝ զառաջին խրատս զոր տուի

քեզ

ճարպկութե՛ ոչ պահեցեր ՚ի սրտի քում և կորու-
սեր, արդ այժմ ուսուցանեմ դառնութե։ Եւ
կապեսցի զնա երկաթի կապանօք, և եդի ՚ի պարանոց
նր հինգ հարիւր լիտր երկաթ, և յանձնեսցի զնա
բեկեալ ծառային իմոյ. և հրամայեսցի տանուլ
թուղթ և թանաք ՚ի ձեռին իւրում, զի ՚ի մտանելն
և ելանելն իմ զօր ինչ առնիցեմ նաթանայ՝ գրես-
ցէ։ Եւ եւս պատուէր նմա, զի զհաց և զջուր
չափով տացէ. այնքան՝ որ ոչ մեռանի և ոչ զուար-
թանայ։ Եւ նախ և յառաջ զարկցի քեր ՚ի թիկունս
նորա և ասասցի.

Որդեակ՝ իմ նաթան՝ մարդոյ ականջքն եթէ ոչ
լսէ, զթիկունսն ծեծելով լսեցուցանեն։

Որդեակ՝ իմ նաթան ՚յաթոռ փառաց նստուցի
զքեզ. այլ դու յաթոռոյ իմոյ ընկեցեր զիս և կոր-
ծանեցեր։ Խօսեցաւ ընդ իս նաթան և ասէ. զի
մ՛որդ. ուրացար զքեւ որդին քոյ։ Եւ ես ասացի.
ոպ ո՛չ ուրացայց.

Որդեակ՝ զի եղեր ինձ ոպ կարիճն այն որ եհար
զասեղն, որ ասեղին ծայրն չար էր քան զիւրն. և
դարձեալ՝ իբրև զայն որ եհար զոտից ըղտուն.
Նման հարեալ զթաթն ՚ի վր կարճին՝ սատակեաց
զնա։

Որդեակ՝ զի եղեր ինձ ոպ վայրենացեալ եզն. որ
էարկ զտոճն և անկաւ փարոյն և վիրաւորեցաւ
իւր ոտքն։

Որդեակ՝ զի եղեր ինձ ոպ այծն այն որ ուտէր

զուարթունն. և ասէր՝ եա 'ի կենդանութե՟ իմում ուտեմ
զքեզ, թող յետոյ հանեն զքո քօքն և ներկեն ըզ
մորթին իմ։

Որդեակ՝ զի եղէր ինձ որպէս այրն այն որ ձգէց
նետ դէպ 'ի յերկինս. թէպէտ ո՛չ կարաց հասուցա-
նել, այլ զանօրէնութի՟ն շահեցաւ և դարձաւ նետն
'ի գլուխն իւր. նոյնպէս և դու կամեցար սպանա-
նել զիս, այլ անմեղութի՟ւն իմ ապրեցոյց զիս։

Որդեակ՝ զի թէ ագի խոզին ութն կանգուն եր-
կայն լինի՝ 'ի տեղի ձիուն ո՛չ կարէ լինիլ։

Որդեակ՝ զի եղէր ինձ ո՟պ արջն այն որ հանդի-
պեցաւ իշոյ միոյ և ասաց. ողջոյն ընդ քեզ. և ասէ
էշն՝ այդ ողջոյնդ՝ իմ տիրոջս պարանոյն լինի որ
արձակեաց զիս 'ի մսրէն որ եկի և հանդիպեցայ
քեզ և տեսի զքո գէշ երեսդ չար։

Որդեակ՝ զի եղէր ինձ ո՟պ որոգայթն այն որ թա-
ղեալ կայր 'ի յաղբն. և եկեալ ճընճղուկ մի. ասէ
զի՞նչ կայցես աստ. ասէ ակնատն՝ աղօթս առնեմ
առ ա՟ծ. ասէ ճնճղուկն՝ զի՞նչ է այդ 'ի բերանդ.
ասէ ակնատն՝ քաղցելոց հաց. և փաղեաց ճընճ-
ղուկն առնուլ զհացն 'ի յակնատէն. և ակնատն
անկաւ 'ի վիզն ճնճղկին. և ասէ ճնճղուկն, թէ
այդ է քաղցելոց հացն. ապա և ա՟ծ այսպէս լսէ
աղօթից քոյ։

Որդեակ՝ զի եղէր ինձ ո՟պ շունն այն որ դողայր
'ի ցրտոյն, և մտաւ 'ի հնոց բրտին. և յորժամ
տաքացաւ՝ սկսաւ հաջել ընդ երես բրտին։

Որդեակ

Որդեակ՝ զի եղեր ինձ ո՛չ շունն այն ագահ. որ ունէր հաց մի՛ ՚ի բերանին և երթայր յեզեր գետոյն և տեսեալ շուն մի այլ ՚ի մէջ ջրին և հաց մի՛ ՚ի բերանն որ՝ ձգեալ զիւր հացն ՚ի բերնէն և անկաւ ՚ի ջուրն, զի առցէ զայնու հացն. և իբրև հասաւ ՚ի մէջ գետոյ, ո՛չ զշունն եգիտ և ո՛չ զհացն. այլ խեղդեցաւ շունն և զրկեցաւ յիւր հացէն. նոյն այես և դու զհայն իմ խլել կամեցար՝ և զրկեցար ՚ի քո հացէն։ Եւ դարձեալ նաթան աղաչանօք ասէ առ խա. մեղայ քեզ հայր այլ չգործեմ զոր ինչ գործեցի. մի՛ չարաչար տանջեր զիս։ Եւ ես ասացի՝ ահա տամ քեզ օրինակ մի. զի ո՛չ ծառն այն որ բուսեալ էր յեզր գետի միոյ. և մարդ մի ծառայէր նմա. և յորժամ հասանէր պտուղն՝ թափէր ՚ի գետն և կորնչէր. և երբ գայր տէրն՝ ոչ գտանէր զպտուղն. և աշխատեցաւ այրն այն 2 և 3 տարի. այլ ՚ի հասանիլ պտղոյն թափէր ՚ի ջուրն և ո՛չ շահէր ՚ի նմանէ. և ապա կտրեաց զծառն և ձգեաց ՚ի ջուրն ասելով. այս քան աշխատեցայ զինչ շահեցայ որ այսու հետև գտանեմ։ Նոյնպէս և դու եղեր ինձ. զի յառաջագոյն այսչափ խրատս տուի քեզ և ո՛չ լուեցիր. այժմ զինչ պիտի լինիս. արժանի ես յայտ չարչարանաց մինչև մեռանիս։ Եւ սպանին զնա և բարձաւ չարն ՚ի միջոյ և եղև խաղաղութիւն։ Որդ՝ զինչ մարդ որ բարւոյն չար հատուցանէ, իբրև զնաթան կորնչելոց է։ Յորմէ փրկեսցէ զմեզ քս ած մեր. և նմա փառք յաւիտեանս"։

Պատմութիւն Աղջկան և Մանկան․ Եւ հարցմունք նոցա ընդ Դեւանն։

ԱՅՐ ՄԻ ԷՐ ՄԵԾԱՏՈՒՆ և իշխան՚ի քաղաքիմի․ և ունէր անչափ գանձ։ Ոսկի և մարգարիտ անգին․ և պատուական ակունք, որ չկայր յայն աշխարհն քան զնա մեծատուն։ Եւ ինքն ծերացեալ էր, և զաւակ ոչ ունէր․ և հանապազ աղաչէր զած վա զաւակի։ Եւ ած ետ նմա որդի անմման և գեղեցիկ։ Երբ մեծացաւ տղայն՝ ետ զնա հայրն յուսումն իմաստասիրութեան։ Եւ նա ուսաւ զամի– մաստասիրական բանս․ և էր պատերազմող անյաղթ

Բայց

Բայց յետոյ ուտել և խմել անկաւ․ և հատոյց ըզ
գանձ հօրն և մօրն․ և հայրն և մայրն միայն դա
տարկ որ այլ փակի բնաւ իրք չմնայ։ Ասաց որդին
ընդ հօրն և մօրն թէ՝ կամի՞ք որ հեռանամք յայս
երկրէս և երթամք հանց երկիր որ չճանաչեն զմեզ․
և զհպարտութիւն յետ գնեմք և մուրամք և ապրիմք
ոչ մեք տրտմիմք, և ոչ մեր չար կամն ուրախանայ
՚ի վերայ մեր։ Ասացին ծնօղքն թէ՝ դու գիտես որ
դեակ։ Եւ առ մանուկն զհայրն և զմայրն և գնայ
՚ի հռոմ քաղաք։ Եւ կայր ՚ի քաղաքին յայնմիկ թա
գաւոր մի բարի և իմաստուն մտան ՚ի քաղաքն և
իջան ՚ի տուն մի։ Եւ այն թագաւորն յորս էր ելեր
և երբ եկաւ թագաւորն ՚ի յորսոյն՝ նա մտաւ մա
նուկն առ թագաւորն, եդ ծունր և կանգնեցաւ։
Եւ սկսաւ թագաւորն խօսիլ ընդ մանկանն և
ասաց․ զի՞նչ խնդրես յինէն որ պարգևեմ քեզ։
Ասէ մանուկն․ թագաւոր յաւիտեան կեաց․ ես 2
ծառայ ունիմ ծախու այր և կին․ խնդրեմ զի գնես
զնա։ Ասէ թագաւորն․ բեր և ես գնեմ։ Գնաց
մանուկն առ հայրն և մայրն․ և ասաց ծնողացն
թէ՝ ինչ որ պատեհ է ինձ՝ կամիմ հանց բան
առնել՝ որ դուք այլ ապրիք և ես այլ։ Ասացին ծը
նօղքն թէ՝ դու գիտես որդեակ։ Ասաց մանուկն՝
թէ կամիմ ծախել զձեզ ՚ի յայս թագաւորիս որ
հանիք բարութիւն․ և ձեր գինովն ինձ բարի լի
նի․ և ես ջանամ շուտով ազատել զձեզ․ դուք
ինչ կու հրամայէք։ Ասացին ծնօղքն թէ՝ դու գի
տես

տես որդեակ։ Եւ էառ մանուկն զհայրն և զմայրն և գնաց առ Թագաւորն։ Ասաց Թագաւորն մանկանն թէ՝ քանի՞ ծախես։ Ասէ մանուկն առ Թագաւորն. տուր ինձ այս կին ծառայիս գին աղէկ ձի և սլէհ իւր սարքն։ Եւ այր մարդոյն գին՝ տուր ինձ աղէկ հալաւ և զգեստ պատուական Հրամայեաց Թագաւորն զինչ որ մանուկն խնդրեաց իւր ծառայիցն գին որ լիակատար ետուն զամենն. և Թուր մի ոսկի գօտւով։ Եւ էառ մանուկն զամ զոր պարգևեաց նմա Թագաւորն։ Ապա ասէ Թագաւորն մանկանն. այլ ինչ կուզես յինէն՝ խնդրեա՛ որ տամ քեզ։ Ասէ մանուկն. հարիւր ֆլորի այլ խարճլըխ տուր Հրամայեաց Թագաւորն և տուին։ Դարձեալ ասէ Թագաւորն. այլ ինչ կուզես յինէն։ Ասէ մանուկն. Հրաման տուր ինձ որ խօսիմ ընդ քո ծառայիդ՝ որ յիմնէ գնեցեր. որ զիւրեանց օրհնութիւնն առնում։

Հրամայեաց Թագաւորն գնա՛ և խօսեաց։ Եւ իմացաւ Թագաւորն որ իւր ծնօղքն էին։ Գնաց մանուկն և անկաւ ՚ի յոտս ծնողացն և ասէ. մի հոգայք թէ ած կամենայ զձեզ շուտով կազատեմ։ Եւ ծնօղքն օրհնեցին զզաւակն իւրեանց։ Եւ մանուկն յիշեաց զած և մեկնեցաւ ՚ի ծնողացն լալով. և գնաց 3 օր և 3 գիշեր ՚ի մեծ դաշտ մի։ Եւ ՚ի գնալն՝ հանդիպեցաւ ընտիր մանուկ մի. բարեւեցին զմիմեանս և ընկերացան ՚ի ճանապարհին։ Եւ երբ որ ընկերացան՝ նա միւս մանուկն իմացաւ

զայս մանկան խօսքն որ զհայրն և զմայրն ծախեր էր ։ Եւ ասաց նմա թէ՝ գիտայիր եղբայր որ իմ թագաւորն զիս խիստ կու սիրէր. և թուղթ աւետեաց ետ որ տանիմ առ կղզեաց թագաւորն և առնում պարգևս մեծամեծս. այլ տեսանեմ զքեզ զի դու խելօք մանուկ ես և՛ լաւ ձիաւոր քան զիս առ զթղթերդ և դու տար այն թագաւորին. զի քեզ շատ բարիք կու պարգևէր զինչ որ աստուած ինձ նախիպ արարէ՝ քեզ լինի. և ես յայս դաշտս

կու կենամ մինչև որ դու գաս առ իս ։

Եղաւ մանուկն զայն թղթերն և ՛ի սէկէքէսան եդիր, և գնաց ՛ի ճանապարհն իւր ՛ի մեծ դաշտ մի ։ Եւ՛ յանկարծակի յիշեաց զհայրն և զմայրն և շատ ելաց. և ՛ի շատ հոգոյն ննջեաց ՛ի վր ձիոյն. և ձին ՛ի ճանապարհէն ելաւ և կորոյս ՛ի քնոյն զճանապարհն ։ Եւ յանկարծակի զարթեաւ ՛ի քընոյն. և էր ծարաւեալ ինքն և ձին. և ջուր ոչ կայր այլ մոլորեալ ՛ի շուրջ գայր ։ Եւ գտաւ ջրհոր մի հին ժամանակաց. և ՛ի ծարաւոյն կամէր ՛ի ջրհորն անականիլ ապա էհան զսէկէքէսան որ զթղթերն ՛ի մէջն էր դրեր. և կապեաց պարան և եհան ջուր. խմեց ինքն և խմցոյց իւր ձիոյն. և պահ մի հանգեաւ ։ Եւ ապա ասաց ՛ի միտս իւր թէ՝ կարդամ զայս թղթերս, և տեսաւ, կարդաց ։

Եւ էր գործ այսպէս։

Այս անուն կոչեցաւ Թագաւորի որդւոյն մե-
րոյ· գիտացիր եղբայր որ այդ Թղթա-
բերող անհաւատ մարդ է և մեզ նեն-
գաւոր· դա մեծ էր առ մեզ և ամ գանձի հաւատ-
ցող· դա ելաւ առ դուստր իմ և մեծս գործեաց։
և ես կամեցայ զինքն կորուսանել. այլ պատարաստե-
ցի քեզ որ մարդ զմեր խախտութիւն չիմանայ· և
առաքեցի առ քեզ որ կորուսանես զինքն թէ զմեր
սէրն կուզես։ Կարդաց և իմացաւ մանուկն որ ՚ի
վ՟ր իւր գալոց էր մահն· պատառեաց զթղթերն
և գոհացաւ կ՟յ· և օրհնեաց զիւր ծնօղքն որ
զինքն ուսումնագէտ արարին զի գիտութեամբն իւր
ապրեցաւ· և աղաչեաց զա՟ծ որ զճանապարհն գը
տանէր։ Եւ մոլորեալ շուրջ գայր զտիւ և զգի-
շեր· և հարցանէր զանուն Թագաւորին, և զայն
քաղաքն որ գնալոց էր· և գտաւ և մտաւ ՚ի քաղա-
քն։ Եւ էր այն քաղաքին Թագաւորն մեծ, և քա-
ղաքն ճարելի։ Եւ իջաւ մանուկն ՚ի տուն պառա-
ւի միոյ, հանգաւ սակաւիկ մի· և սկսաւ հարցա-
նել և քննել զքաղաքն, և զքաղաքին գնացսն, և
զԹագաւորն։ Եւ պատմեաց թէ՝ այս քաղաքիս
Թագաւորն՝ դուստր մի ունի խիստ աննման և
գեղեցիկ և իմաստուն՝ որ չիկայ իւր նման· որչափ
՚ի տարիք է հասեր՝ նա իննսուն և ինն Թագաւորի
որդի է սպաներ։ Ասէ մանուկն· ինչ պատճառի

համար

համար սպանանէ ։ Ասէ Պառաւն. որդեակ կամիմ
թէ՝ ով զիս յաղթէ իմաստութեամբ՝ ես զնա առնեմ
ինձ այր. և թէ ես յաղթեմ զնա՝ սպանանեմ զինքն
Եւ այդ պատճառաւդ յաղթէ զթագաւորաց որ-
դիքն և սպանանէ. և զգլուխն՝ իւր չարտախին վերայ
կուտընկէ ։ Եւ իւր չարտախն ՚ի վերայ ամենայն քաղաքին
կու նայի. և ունի թախտ ոսկի ակամբ և մարգար-
տով շարած. անդ կու նստի և հայի առ մարդիկն
՚ի ղափէսէն ՚ի վայր. որ մարդ զինքն չկարեր տե-
սանել ։ Եւ ունի պառաւ մի թարգմանօղ որ նա
խօսի ՚ի հետ մարդոյ որ առ ինքն մտանեն ։ Լսեց
մանուկն զայն խօսքերն ՚ի պառաւէն՝ և գիշերն ՚ի
քուն քուն չերթայ ։ Երբ լուսացաւ գնաց ՚ի քաղա
նիքն. հագաւ զիւր ոսկեկար հանդերձն. և ա-
նուշահոտեցաւ մշկով և վարդէ ջրով ։ Եւ գնաց
՚ի թագաւորի դրսորոջ դուռն. և ուզեց հրաման
՚ի մօտ առ թագուհին մտանել ։ Եւ մարդիկն որ
՚ի դուռն էին՝ խրատ տուին մանկանն թէ պատ-
րաստ կացիր զի շատ թագաւորի որդւոյ գլուխ
է առեր ։ Եւ երբ մանուկն մտաւ ՚ի ներս՝ բարև
ետուր. դրին ոսկի աթոռ և նստաւ մանուկն ։ Եւ
գիտաց աղջիկն որ վերայ այն բանին էր եկեր առ
ինքն ։ Ուղարկեց խապար հօրն և մօրն և նայիպ
նուն և իշխանացն ՚ի խնդիր, և ժողովեցան ամենեքն ։
Ապա ասաց աղջիկն ընդ իւր թարգման պառաւն
թէ՝ ասա այդ մանկանդ՝ կուզէ՞ որ տամ յայն
կթխաց էն որ իւր ընկերտայն եմ տուեր ։ Ապա
մանուկն

մանուկն թէ՝ այդ կամքն լինի։ Ասէ աղջիկն ընդ մօրն և ընդ նայխպնուն և ընդ իշխանուն որ վերայ լինէին այսմ բանին. որ թէ մանուկն յաղթէ զթագաւորին դուստրն՝ առնու զնա իւրն՚ի կնութին. և թէ դուստրն թագաւորին յաղթէ զմանուկն՝ առնէ նմա ինչ զայլոյն որ սպանէր։ Հաւանեցաւ մանուկն, և ամենքն վերայ կացին։

---

Հարցմունքն է։

Ասէ աղջիկն. ո՞վ է քո հայրն։
Ասէ մանուկն. հուրն և հաւրն։
Ասէ աղջիկն. ո՞վ է քո մայրն։
Ասէ մանուկն. հողն և անձրեւն։
Ասէ աղջիկն. յո՞ր կենդանակերպն ես ծնեալ։
Ասէ մանուկն խոյին տալին եմ ծնեալ։
Ասէ աղջիկն. ո՞վ է քո դայեակն։
Ասէ մանուկն. այն է իմ դայեակն՝ որ նա զիս կու տեսանէ, և ես զնա չեմ տեսաներ. նա զիմ ձայնն կու լսէ, և ես զնորա ձայնն չեմ լսեր։
Ասէ աղջիկն. այդ տղայոյ հարցմունք է թող այդ կենայ։
Ասէ աղջիկն. ո՞րն է առաջին արիւնն որ անկաւ յերկիր։
Ասէ մանուկն. Աբէլի արիւնն է զոր Կայէն սպան։
Ասէ աղջիկն. ո՞րն է երեք բանն որ կերան և խմեցին և մեռան. և չէր ծներ զիւրեանքն մայր։

Ասէ

Ասէ մանուկն. ատեամ եայ է եւ գառն աբրահա-
մու. եւ մէկ այն խոյն որ քո ՚ի սաբեկայ ծառեն
արար կախ։

Ասէ աղջիկն. դու մէկ աւելը ասայիր։

Ասէ աղջիկն: ո՞վ ոք էին որ ծնեալ էին եւ ոչ
մեռան։

Ասէ մանուկն. ենովք եւ եղիա է, որ ոչ մեռանին
մինչեւ ՚ի գալուստ նեռուին։

Ասէ աղջիկն. այն ինչ թռչուն է որ ուտէ յերդ
եւ գարի։

Ասէ մանուկն. այդ մորեխն է։

Ասէ աղջիկն. այն ինչ է որ քանի աղբի, ձանձրի՞
կու շատանայ եւ աղլի։

Ասէ մանուկն. գայլ ագռա՞ւն է. զի յորժամ
կու բերէ զձագն՝ սպիտակ է մինչեւ 3 օրն, եւ
մայրն կու փախչի. եւ երեք ա՞ւուրն յետոյ՝ կու
սեւանայ եւ մայրն գայ առ ձագն իւր։

Ասէ աղջիկն. այն ինչ էր որ քանի ողջէր յերդ եւ
գարի կուտէր. եւ երբ մեռա՞ւ՝ մարդոյ միս եւ ա-
րիւն կէնա՞ւ։

Ասէ մանուկն. այդ այն է որ սամսօն մանուկն
էշոյ չէնիկէ մի էառ ՚ի ձեռն եւ այնով հազար մարդ
սպանեց։

Ասէ աղջիկն. այն ինչ ծառ էր որ ձիւղ եւ տերեւ
էր, միս եւ արիւն դարձա՞ւ։

Ասէ մանուկն. այդ մովսէսի գաւ՞ազանն էր, որ
քանի ծառ էր՝ ձիւղ եւ տերեւ ունէր. երբ որ օձ
դարձա՞ւ

դարձաւ՝ միս և արիւն եղև ։

Ասէ աղջիկն․ այնինչ երկու հակառակ են որ զի֊
րար կու սիրեն ։

Ասէ մանուկն գիշերն և ցերեկն է ։

Ասէ աղջիկն․ այն ո՞վ էր որ ՚ի մամն մերձեցաւ․
նա մամն ասաց թէ՝ ես կոյս եմ ։

Ասէ մանուկն․ աբէլի մարմինն․ էր որ ՚ի հողն
բերին․ հողն ասաց թէ՝ ես կոյս եմ ։

Ասէ աղջիկն․ այն ո՞րն էր որ 15 տարի թագա֊
ւորեաց երբ 16 մտաւ՝ նա հիւանդացաւ․ երբ
30 մտաւ նա մեռաւ և դարձեալ ողջացաւ ։

Ասէ մանուկն․ այդ լուսինն է ։

Ասէ աղջիկն․ ինչ գերեզման էր որ շարժուն և
գնայուն եղև ։

Ասէ մանուկն․ յունան մարգարէն էր որ ձուկն
կլլաւ․ շարժուն և գնայուն եղև ։

Ասէ աղջիկն․ այն ո՞վ էր որ ջուր և կերակուր
տարաւ․ քաղցելոյ․ նա զկերակուրն թողին զտա֊
նողն կերան ։

Ասէ մանուկն․ դանիէլ մարգարէն էր որ առիւ֊
ծոյն տարան․ զդանիէլ թողին և զտանօղն կերան

Ասէ աղջիկն․ այն ո՞վ էր որ մեռաւ ոչ մարմինն
՚ի հող մտաւ, և ոչ հոգին առ ած գնաց ։

Ասէ մանուկն․ ղովտայ կինն էր որ աղ դարձաւ․
ոչ մարմինն ՚ի հող մտաւ, և ոչ հոգին առ ած
գնաց ։

Ասէ աղջիկն․ այն ինչ ծառ է որ ունի 12 ճիւղ

և

կամէն ձիւղ 30 տերև. և պտուղնի սև և սպի-տակ։

Ըսէ մանուկն. ծառն տարին է. 12 ձիւղն ամիսն է. տերևն 30 օրն է՝ պտուղն սև և սպիտակն՝ տիւ և գիշերն է։

Ըսէ աղջիկն. այն որն էր որ կու քարկոծէին. ոչ մարդ էր ոչ քաջ էր և ոչ հրեշտակ. և խօսեցաւ զէտ մարդ։

Ըսէ մանուկն. երեմիա մարգարէին վէմն էր որ կու քարկոծէին՝ խօսեցաւ զէտ մարդ. իբր թէ ինքն է երեմիա մարգարէն։

Ըսէ աղջիկն. զինչ էր այն որ խրատ ետ ժողո-վրդեանն. ոչ քաջ էր ոչ հրեշտակ և ոչ ադամայ որ-դի և խօսեցաւ զէտ մարդ։

Ըսէ մանուկն. մրջիմն է որ ած յիշեալ՝ ի գիրն և ասաց գնացէք՝ ի ձեր դադարքն մտէք. սողոմոն ժողովք է արեր՝ որ՝ ի հոտ չերթայք։

Ըսէ աղջիկն. այն ո՞վ էր որ էլչի առաքեաց ած. ոչ քաջ էր ոչ հրեշտակ, և ոչ ադամայ որդի։

Ըսէ մանուկն. գայլ ագռաւն էր, որ եկաւ առ ադամ երբ կայէն զաբէլ սպանեց, և ադամ չգի-տէր թէ զինչ առնէր. եկին երկու ագռաւ և մէկն զմէկն սպանեց և թաղեց. ապա ադամ ուսաւ և փորեց զգետինն և թաղեց զաբէլ։

Ըսէ աղջիկն. թէ՝ արի ել և գնա. այսօր խալիսե յարհիձեռայս. փախ կուտայր մանկանն։

Ըսէ մանուկն. թէ այն ածն որ փրկեաց զիս այս օր

օր՝ կարօղէ որ՚ի վաղիւն այլ փրկէ. և՚ելաւ և
գնաց խնդալով։

Յորժամ տեսան՝ ամենքն զարմացան զնոր արբիլն. զի անկեալ՚ի զառ այլ մարդ չէր արբեր մինչև՚ի սա։ Գնաց մանուկն՚ի յիւր իշխանքն. և տեսաւ զի կուրայր պառաւն դպռնայէս։ Եւ պառաւն երբ տեսաւ զմանուկն՝ խրախուրախացաւ և ասաց որդեակ դու բարով եկիր. այսօր նոր ծնար՚ի մօրէդ. ես վախեցայ թէ զքեզ այլ կու սպանանէ. և քո խղճուն ես մեռանէի։ Ասէ մանուկն թէ՝ ած փրկէ զիս՚ի նմանէ։

Աղբիւն երբ լուսացաւ՝ գնաց մանուկն՚ի դուռն թագաւորին. ետուր բարև և ասաց թէ՝ գիշերս բարով լուսացաւ քեզ։

Եւ նոքա դրին ոսկի աթոռ, և մանուկն նստաւ։

Ասէ աղջիկն. այն ո՞վ էր որ մէկն զմէկն սպանէր մեռանօղն՚ի դժոխքն գնայ, և սպանօղն՚ի յարքայութի։

Ասէ մանուկն. ղամէք է որ զկայէն սպան. կայէն ՚ի դժոխքն գնայ, և ղամէք յարքայութի։

Ասէ աղջիկն. այն ո՞րն էր բուսն ձերմակ էր, նա սև դարձաւ։

Ասէ մանուկն. նոյեայ որդին է. երբ որ զա-նէծքն ընկալաւ՝ նա սևցաւ։

Ասէ աղջիկն. այն ո՞վ էին որ կերան և խմեցին և մեռան, և չէր ծներ զիւրեանքն մայր։

Ասէ մանուկն. ադամ և եւայ էր։

Ասէ

Ասէ աղջիկն. այն ո՞վ էր որ էգն յորձէն ծնաւ։
Ասէ մանուկն. Եւայ է որ ծնաւ յԱդամայ։
Ասէ աղջիկն. ո՞վ է այն որ 'ի գայլըն բերանն դըրին,
նա չկերաւ։
Ասէ մանուկն. Յովսէփ գեղեցիկն է։
Ասէ աղջիկն. այն ինչ տեղ է որ քանի ծս ստեղ-
ծեր է ած, նա արեգակն 'ի վըր չէ դիպեր։
Ասէ մանուկն. այն ծովու յատակն է, որ Մովսէս
պատառեաց։
Ասէ աղջիկն. այն ինչ երկուք է որ քանի ապրի
կու մեծանայ։
Ասէ մանուկն. չկայ մեծ քան զձուկն 'ի ծովն,
և զօձն 'ի ցամաքին։
Ասէ աղջիկն. այն ինչ 2 սիրելի են որ զիրար կու
ատեն։
Ասէ մանուկն. Հոգին և մարմինն է։
Ասէ աղջիկն. այն ինչ է որ զմարդ հարուստ կանէ
և դառնայ աղքատ կանէ։
Ասէ մանուկն. ապրշումի ճըճին է և իւր խելքն։
Ասէ աղջիկն. այն ինչ արիւն է հալալ ուտելոյ։
Ասէ մանուկն. այդ ձկանն է։
Ասէ աղջիկն. այն ինչ էր ո՛չ կերաւ ո՛չ խմեց 'ի
կենդանութենն. երբ մեռաւ՝ կերակուր կերաւ
հող՝ և խմեց ջուր։
Ասէ մանուկն. Մովսիսի գաւազանն էր. որ քանի
ծառ էր՝ կերակուր ո՛չ ուտէր. երբ կտրեցաւ
ծառէն և օձ դարձաւ՝ նա կերակուր կերաւ ըզ
հողն

Հողն և խմեց զջուրն և կորեց զծովն։

Ըսէ աղջիկն․ տուն մի կայ մէջն ոսկի և դուռն արծաթ, երբ որ պատն խոռի՝ նա ամէն ծո՛ի վր դայ, չեն կարեր չինել։

Ըսէ մանուկն․ այդ հաւկիթն է․ երբ որ կոտրի՝ այլ չի չինուիր։

Ըսէ աղջիկն․ արի ճե և գնա․ այսօր այլ զերծար՝ ի ձեռացս․ վաղիւն տամ քեզ յայն կթխայեն որմէկ այլ ընկերոտայդ տուրիւ։

Ըսէ մանուկն․ ած ողորմած է, և ելաւ գնայ խնդալով։

Երբ լուսացաւ՝ գնայ ՚ի դարպասն ՚ի դուռն թագուհւոյն․ երետ բարև թէ գիշերս բարևով լուսացաւ քեզ։

Եւ հրամայեաց աղջիկն որ դրին զոսկի աթոռն, և նստաւ մանուկն։

Ըսէ աղջիկն․ ո՞վ է այն որ կու կռուուի լսելով, և կու զարնէ ուրուլի նա չունի ձեռք և ո՛չ ոտք։

Ըսէ մանուկն․ այդ ձուկն է։

Ըսէ աղջիկն ո՞վ է այն որ կերակուր ուտէր մինչ մեռեալ ՚ի տապանին էր, և եղև տապանն կենդանւոյ։

Ըսէ մանուկն Յոբ երանելին էր որ քանի կաւագնեալ էր՝ նա մեռեալ էր և կերակուր ուտէր․ և յետոյ առաւ զիւր գեղեցկութիւն կրկին։

Ըսէ աղջիկն այն ո՞վ էր որ խրատ ետ մարդոյն ո՛չ քաշ էր ոչ մարդ, և ոչ հրեշտակ։

Ըսէ

Ասէ մանուկն բաղաամայ էշն է ասաց Թէ դար-
ձիր յետս և մի երթար անիծել զիսրայէլ։

Ասէ աղջիկն ո՞վ էին որ երկու խապարբեր ուղար-
կեցին ոչ քաջ էր՝ ոչ մարդ, և ոչ հրեշտակ։

Ասէ մանուկն, ագռաւն և աղաւնին էր, որ Նոյ
ուղարկեց խապար բերելու։

Ասէ աղջիկն ո՞վ, ոք էին այնոքիկ որ մեռան և
կային ընդ մահ և ընդ կեանք 300 տարի։

Ասէ մանուկն 7 մանկունքն էին, որ փախեան՝ի
Թագաւորէն և նինջեցին՝ի յայրն և յետ 300 տա-
րւոյ յարեան։

Ասէ աղջիկն ո՞վ ոք էին որ երբ յեգիպտոս մտան.
75 էին և երբ ելան, 600000 եղան։

Ասէ մանուկն յակօբ նահապետի որդիքն էին։

Ասէ աղջիկն անբուսն անծնին բարձին, և անդա-
դարին երդօքն անցուցին։

Ասէ մանուկն անբուսն՝ աղն է. անծին՝ ջուրն է.
անդադար՝ ջուրն է. երդիք՝ կամուրջն է։

Ասէ աղջիկն. այն ինչ է որ ած ետ վաղվաղէն ելա-
ցանէց զկանն. և յամէն պահու երթայր և ածէր՝
մեծացիր ած հրամանաւն. և զինչ տարին որ կու
մեծանայր՝ նա ամէն սահաթ մէկ մէկ տարւոյ չափ
մեծանայր ՝ի մէկ օրն։ և ՝ի մէկ այլ օրն արար զինչ
որ՝ խուրեան պիտոյ էր։

Ասէ մանուկն. այդ այն ծառն է՝ որ տնկեցին՝ի
յայգին կիպարի. զի ած առաքեաց ձեռօքն գա-
բրիէլի հրեշտակի Նոյ և յասէ. տա՛ր ցանէ
զայդ

վայր որ լինի ծառ ։ կտրէ և տապան շինէ․ մինչ
՚ի ներս դու և որդիքն քո․ կանայք որդւոց քոց և
կին քո ընդ նմ․ և արարին այնպէս՝ և ապրեցան
ամենքն ։

Ասէ աղջիկն․ երեք բան ինչ էր որ խօսեցան որ
յայս ծս չկայ ։

Ասէ մանուկն․ երեք բանքն այսոքէ․ I ծովն է որ
խուսի ջուրն․ I երկինքն է որ սուն ջուրն․ I հացն
է որ կաթ ջուրն․ և մէկ այլ մարդոյն ձեռայն
մէջն է որ մաղ ջուրն ։

Յայս ժուղապես այլի փոխեցաւ աղջիկն ՚ի կրտըր
ջէն և ասէ․ այլի դու մէկ աճելի տայիր ։ Եւ
ամպ ալի ճլ և գնա․ այսօր այլ գիրծար ՚ի ձեռա-
նէս․ վաղն հասցնեմ զքեզ քո ընկերտայն ։

Ասէ մանուկն․ յան եմ ապաճինէր ինքն ողորմած
է, ողորմի ինձ ։

Եղաւ խնդալով և գնաց ուրախութեամբ ՚ի յիւր
իշխանքն ։

Երբ վաղինն լուսացաւ՝ նա եկաւ ՚ի դուռն թա
գուհւոյն բարևեաց ։

Եւ ասէ աղջիկն թէ՝ գիշերս իւր բարով լուսա
ցաւ և քեզ․ և ցուրին զուկի ածոռն և նստաւ ։

Ասէ մանուկն թէ՝ հրամայեա մեծ թագուհի այլ
ինչ կու հրամայս ։

Ասէ աղջիկն․ հիմի հրամանք քո է ։

Ասէ մանուկն․ ո՞վ էր այն որ հարուստ էր աղքա
տացաւ․ և յիւր աղքատուէնն հ․ ․ու գիւր հայրն․

և

և հեծեալ զիւր մայրն. և գնայր ուր զիւր ապրանքն գտանէր՝ նա մահն հասեալ՝ ՚ի վր առեալ զմահն՝ ՚ի ձիոյն վր խմեց մահուն ջուր՝ և խմցոյց իւր ձիոյն ինքն այլ ապրեցաւ և ձին այլ:

Եւ աղջիկն չկարայ խօսիլ զի ոչ գիտէր: Այլ ասայ ընդ մանկանն թէ՝ այսօր գնա՛ վաղիւն տամ քեզ պատասխանիդ. այդ դժար զրոյց է: Եւ մանուկն եկեալ գնայր ՚ի յիւր օթեանքն:

Ասէ աղջիկն ընդ իւր թարգման պառաւն թէ՝ գնա՛ ՚ի շուկայն. և առ սպիտակ հաց, և գէր սագ մի. և հաւ խորոված. և զփոքր լից շաքրով. և երկու ամանս անուշ գինի խիստ ուժով լինի: Գնացին ծառայքն և կատարեցին զկամքն նր: Եւ երբ դառըն քուն եղան ամենքն, աղջիկն հագաւ զիւր ոսկէկար հալաւն և անուշահոտեցաւ: Եւ 2 գեղեցիկ աղջիկ այլ ՚ի հետ իւրն առաւ: Եւ ծառայիցն հրամայեաց որ քարձին զկերակուրն անուշահամ և զըմպելին. և գնացին յիջևան մանկանն և զարկին կղուռն:

Ասէ մանուկն. ով ես դու:

Ասեն ծառայքն. պարոն գիտենաս որ աղջիկ եմք ՚ի Բաղդադ թագաւորին. և զինչ որ ունին արեգական սիրոյ տէր է՝ և մեք քեզի սիրոյ տէր եմք, այս պատճառին համար կամիմք տեսանել զքեզ:

Ասէ մանուկն՝ գնա՛ ՚ի զատ. ած գիտէ որ նա չի մտաներ առիս. և ես ոչ գիտեմ զնա:

Եւ նոքա աղաչանօք պնդեցին զերեսներն՝ թէ ոչ երթամք

երթամք 'ի գրանես մինչև տեսանեմք զքեզ։
Եւ մանուկն եթող մտանել 'ի ներս։
Եւ մտեալ աղջիկն, եբաց զերեսն։
Եւ երբ տեսաւ մանուկն զերեսն աղջկան՝ փայլե-
ցաւ 'ի սիրոյն։
Եւ աղջիկն նստաւ, և նստոյց ընդ իւր զմանուկն։
Ասէ աղջիկն ցմանուկն թէ՝ ունիմս կերակուր ինչ ուտելոյ բեր որ ուտեմք. և անուշահամ գինի որ խմեմք և անուշանամք։
Զձայնն փոխեր էր աղջիկն որ մանուկն չէր կարէր ճանաչել զնա.
Ասէ մանուկն. ած գիտէ որ չունիմ ինչ 'ի ժամուս յայսմիկ զի չգիտէի զձեր գալն առ իս որ պատրաստէի ձեզ կերակուր լաւ.
Ասէ աղջիկն ծառայիցն իւրոյ թէ՝ բերէք զինչ որ ունիք ուտելոյ և բերին գրին սեղան զանազան անուշ կերակրով, և նստան անուշ 'ի խում. և ամպակ գինւով արբուցին զմանուկն. և աղջիկն անուշ զրոյց տայր, և ժպտեցնէր զմանուկն.
Ասէ մանուկն հրամայէ որ պառկիմք։
Ասէ աղջիկն մանկանն թէ՝ զիս կուզես՝ նա պատմէ զայն խօսքն ինչ որ երեկ թագաւորի դստերն ասացիր։
Ասէ մանուկն թէ՝ չունիմ կարողութիւն ասելոյ. զի կու վախեմ թէ մեռանիմ. այլ բան հարցուր որ ասեմ։ Նա երդուաւ յանձ թէ զայն բանն մինչ ոչ լսեմ 'ի քեն՝ ոչ կատարեմ զկամս քո. և սկսաւ
խաղալ

Խաղաղ է նմա։

Եթէ մանուկն բորբոքեցաւ ՚ի խիստ սիրոյն, և յաղ-
թեցաւ ՚ի գինւոյն. և ասէ ցաղջիկն՝ արի որ պառ-
կիմք

Ելաւ աղջիկն և եհան՝ զշարէ շապիկն՝ և եդ ՚ի
սնարքն ՚ի գլխոյն նորքա. և սկսաւ խաղալ ՚ի հետ
մանկանն.

Եթէ մանուկն յաղջկան սիրոյն և ՚ի գինւոյն թմրե-
ցաւ և մեկնեաց զխօսքն. և աղջկանն չկարաց առ-
նել ինչ.

Եթէ աղջիկն ինչպէս ՚ի միտքն. առհեցաւ յանկողնոյն
և ելաւ գնաց խնդալով, և շարէ շապիկն պէտ չա
րաւ. և խիստ ուրախացաւ թէ՝ ուսայ զհանելու-
կըն. և ինձ իրք մի չկարաց առնել. և ընդ լուսա-
նալն՝ ապաստանել տամ զինքն։

Եթէ մանուկն ՚ի վաղվնէն զարթեաւ և խելքն ՚ի
վերան եկաւ, նա իմացաւ որ զինքն խաբած էր,
քիչ տրտմեցաւ. յետոյ ետեսաւ զհալաւ աղջ-
կանն որ մոռացեր էր և շատ ուրախացաւ, և
էառ պահեց։

Եթէ եկեալ գնաց ՚ի դարպասն, եդ բարև և նստաւ
յանկի աթոռն։

Իմացաւ մանուկն որ թագաւորին դուստրն էր որ
իրիկունն մօտն էր գնացեր։

Եթէ աղջիկն ուղարկեց խապար հօրն և մօրն և իշ-
խանացն և եկին միաբան։

Եթէ մանուկն յոտն ելաւ ծունր էած թագաւորին

և

և նստաւ։

Ըսէ աղջիկն թէ՝ ասեմ զերեկեան բանն որ յիս
հարցար. և սկսեալ ասաց զամէնն կարգաւ՛ որ ինչ
կուռնն լսեր էր։

Եւ ամենեքեան զարմացան ընդ գիտունի աղջկանն։

Ասէ մանուկն ընդ թագաւորն առաջի ամիրիշխա
նայն։

Տիեզերակալ թագաւոր՝ քո Դուստրն ինձ երեք
օր բան հարցաւ և ես պատասխանի տուի. ես այլ
խնդրեմ բան մի հարցանեմ. եթէ գիտենայ՝ նա ըզիս
յաղթերէ և եթէ ոչ՝ ես եմ յաղթեր զնա։

Ասէ թագաւորն. այսոր հաւան եմք։

Եւ վկայ կային ամիրիշխանքն՝ որ այլ աւելի առա
ջիս չառնեն։

Ասէ մանուկն առ աղջիկն թէ՝ ո՞րն այն թռչունն,
որ կալայ զինքն և զենեցի և զփետուրն պահե-
ցի զինք խորովեցի և դրի առաջևս թէ ուտեմ,
և այն թռչունն՝ ի հետն ունէր այլ ցեղ թռչունք
ներ. ապա իւր փետուրն էր գեղեցիկ որպէս
զոսկի՝ նա յանկարծակի թռաւ և գնայ։ Թէ չէ՞ք
հաւատար նա զփետուրն բերեմ որ տեսնուք։

Աղջիկն երբ որ զայն լսեց՝ խիստ վախեցաւ. գի
տէր որ զիւր խաղալն կու տայր։

Ասէ՝ այդ ինչ դիժար զրոյց է, չեմ կարեր գիտ
նալ, գիտեմ որ յաղթեցեր զիս. ուզէ զինչ որ կու
զես տամ քեզ։

Ասէ մանուկն. այլ ինչ չուզեմ քան զքեզ աւելի։

Եւ

Եւ իշխանքն վկայեցին և հաւանեցան ։ Պսակեցին 'և արարին 7 օր հարսանիք ։ Եւ ետ Թագաւորն ըղ- կէսն Թագաւորութե̃ն և զկէս գանձին ․ և որքան Ծ ունէր ամ̃յուն տիրեց ։ Այլա ուղարկեց շատ մար- դիկք և շատ գանձս առ, այն Թագաւորին որ հայրն և մայրն 'ի քո̃ն էին, և եթէր զիւր ծնօղքն 'ի մօտ իւրն ։ Եւ տեսեալ միմեանս ուրախացան և գոհա- ցան զաստուծոյ ։ Եւ զասպրնջական պատուան տարաւ 'ի դարպասն և արար իւրն մեծ ։ Եւ Թագա ւորն յետ մահուան իւրոյ ամենայն գանձին և հե- ծելին և աշխարհին տէր կացոյց զՄանուկն ։ Եւ քո̃ մարդասիրին փառք յաւիտեանս յաւիտենից

Ամէն ։

# ՎԱՐՔ

Եւ պատմութիւն Աղէքսիանոսի ճգնաւորին:

ԱՅՐ ՄԻ ԷՐ 'Ի ՔԱՂԱՔՆ
ըստամպօլ մեծատուն յոյժ և իշխան մեծ
և հրամանատու բազում գաւառացի.
Եւ էր անուն նր Եփրեմիանոս. և կնոջն աննա: Եւ էր
Եփրեմիանոս մեծ սիրելի 'ի յաչս Թագաւորին իւրոյ
Սոքա էին հասեալ 'ի մեծ ծերութիւն և ոչ ունէին
զաւակ 'ի վերայ երկրի որ ժառանգեր զինչս նց.
Եւ էին կարի տրտում և անմխիթարելի ժառան
գութեն: Տիւ և գիշեր հանապազ աղաչէին զած
վասն զաւակի: Եւ յաւուրց միում կինն աննա բա-
զում աղախնեօք և ծառայիւք գնայ 'ի մեծ յեկեղե-
ցին

ցին 'ի սրբն Սոփիայ, և կայր աղօթս առ տէր. և
բարեխօսութբ սրբ անձանցն և ամսբյն հայցէր 'ի
քնէ ժառանգ բարի։ Եւ յետ աղօթիցն բազում,
ողորմութիւ առնէր աղքատաց և կարօտելոց և
քահանայիցն ամենեցուն, երթեալ գնայր 'ի տուն իւր.
Եւ 'ի գնալն 'ի ճանապարհին հանդիպեցաւ մին
աղքատ խեղճ և ողորմելի և ասաց. տիկին՝ տուր
ինձ ողորմութի 'ի քո մէկ որդւոյդ արևուն։ Եւ
տիկինն հիացեալ 'ի միտս իւր, ասաց թէ՝ վա՛յ ինձ
զի ես անժառանգ եմ, և դու ինձ երանի տայ վն
որդւոյ. արտասուեաց և ելաց. և հանեալ ետուր
նմա ողորմութի, և եկաց գնաց 'ի տուն իւր։ Եւ
'ի գիշերին յայնմիկ երեկ 'ի տեսլեանն մին ծեր և
աւետեաց զանձնայ և ասաց։ Կին դու ահա՛ կատարե
ցաւ խնդրուածք քո առաջի այ։ Բայց զայդ արծա
թապատ դարպասն որ անթիւ ոսկւով և արծաթով
է զարդարեալ՝ տացես զնա ողորմութի աղքատաց
և կարօտելոց։ Եւ ընդ առաւօտն ելեալ կոչեաց
զերիցունս և զքահանայս, և արար մատաղս մեծ և
ընդունելութիւս։ Եւ պատմեաց զտեսիլն իւր առն
իւրում եփրեմիանոսի։ Իսկ նա ոչ կամէր տալ այն
զրժցառապէս եւ. քանզի սիրէր զդարպասն զայն
որ 'ի 532 լիտր յոսկւոյ էր շինեալ. և այսկոյս և
այնկոյս մարգարտով շարեալ և զարդարեալ։ Եւ
չորս 10. 10 բազայ լիտր արծաթոյ էր թռուցեալ
արծուանմանն։ Եւ մի այլ զթևս իւր տարածեալ
'ի վայելչութի անկողնոյ իւրոյ. և էր 32 լիտր ար
ծա

Ֆաթրոյ։ Ե՛ առեալ զայս կինն, կոչեաց զուսկեր իւյս եւ այար զնա զրամս եւ զանհեկանս. եւ քարոզ կարդայ եւ ասայ ծողովել զամ՛ քահանայսն որ ընդ իւր իշխանութն կային. եւ զամ՛ աղքատս եւ զխեղս եւ զկաղս եւ զկոյրս. եւ պահել զնա ՚ի հրատից ամիսն բոլոր մինչեւ յելս ամսոյն։ Ե՛ առեալ ընդ իւր 345 քահանայս. եւ իջեալ ՚ի վանսն հսկեցին զգիշերն մինչեւ յառաւօտն եւ պատարագ մատուցին վասն որդեծնութենր. եւ նա ետ նց 7, 7, դահեկանս։ Ե՛ յետ երեք ամսոյ գիտաց կինն վ յղութ իւր. եւ ետ աւետիս առ այրն իւր. եւ յետ ինն ամսոյ ծնաւ կինն ՚ի ծերութե իւրում արու զաւակ։ Ե՛ յորոյեալ այրն արձակեաց զհրամանակս ըն ամ իշխանութիս իւր, կոչել զքահանայս եւ զեպիսկոպոսունս եւ զիշխանս։ Ե՛ արար մեծ ընդունելութի, եւ մկրտեաց զմանուկն. եւ եդին զանուն նր ալիքսիանոս։ Ե՛ իբրեւ զարգացաւ մանուկն՝ ետ զնա հայրն յուսումն գրոյ։ Ե՛ էր պատանին առատամիտ եւ առաւաձեռն քան զհայրն իւր, եւ էր գեղեցիկ յոյժ. եւ ձայն նր՝ էր քաղցր իբրեւ զքնարի։ Ե՛ իբրեւ եղեւ պատանին Ժ8 ամաց՝ եզեն հայրն արջառս եւ ոչխարս բազումս վասն նր՞ Ե՛ էր հսկայաձեւ եւ ընթերցող ամենայն սբ գրոց, հին եւ նոր կտակարանացն։ Մինչեւ էհաս ընդ նր ցապարան թագաւորին։ Ե՛ յաճոյր մտումաւէ թագաւորն ցեփրեմիանոս. ետ պտուղ որովայնի քում, որոյ ընդ նր էհաս առոխ. եւ է իմ դուստրը

տըր զոր դու Ճանաչես. արդ՝ տուր զնա ինձ՚ի մխիթարութիւն։ Որդի եւ արծաթ իմ նման եղիցի. և յետ մահուան իմոյ՝ ժառանգէ զաթոռն իմ։ Եբ եղ եփրեմիանոս յերեւսայ Թագաւորին եղնայր Թմբկօք և սպարուք՝ի տուն իւր։ Իբրեւ լուաւ ալեքսիանոս զգալըուստ հօրն իւրոյ՝ յարեաւ ընդառաջ եւ երկիր եպագ նմա եւ ասաց. Հայր իմ ալեօք ծաղկեալ զի՞ է քեզ։ Պատասխանի ետ հայրն նր եւ ասէ. խնդամ եւ ուրախ եմ վն քո. զի Թագաւորն խոստացաւ փեսայացուցանել զքեզ։ Պատասխանի ետ ալեքսիանոս եւ ասէ. գրեալ է՝ի սբ աւետարանն թէ որ դառնայ ընդդէմ ծնողացն իւրոց՝ տրտմութե իջանէ՝ի դժոխս։ Բայց դու անարգել լինիս յերեսաց իմոց, զի յայժ խզեցին բանք քո զսիրտ իմ։ Եբ իբրեւ լուաւ եփրեմիանոս. դարձաւ տրտում եւ անկաւ առաջի Թագաւորին եւ ասէ. վայ է ինձ, այսօր զի որդին իմ արհամարհեաց զհրաման Թագաւորիդ եւ զբանս իմ։ Ասէ Թագաւորն ցեփրեմիանոս. մի հոգար զայդ. ես՝ լինի որ դարձուցանեմ զնա յայնմիտ խորհրդոյն։ Եբ հրամայեաց Թագաւորն կոչել զալեքսիանոս։ Եբ գնացեալ գտին զալեքսիանոս, որ ընթեռնոյր զսաղմոսարանն զոր ունէր՝ի ձեռին իւրում։ Ասէ պատանին՝ կոչէ զքեզ Թագաւորն։ Եբ յարուցեալ գնաց ալեքսիանոս զհետ նր յապարանս Թագաւորին։ Ասէ Թագաւորն ցալեքսիանոս. որդեակ՝ զամուսնութիւն ոչինչ հաճիս։ Պատասխանի ետ ալեք

սիանոս

ոխանոս և ասէ. ոչ թէ զամուսնութիւն այնչափ հա-
մարիմ, այլ գրեալ է 'ի սմա ամենատարանին թէ՝ որ
ոչ թողու զհայր՝ կամ զմայր՝ կամ զկին՝ կամ զոր-
դիս՝ կամ զագարակս՝ և ոչ առնու զխաչն իւր
և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի։ Ոսկի և արծաթ
կերակուր է ժանկոյ. և համդերձ փափուկ ցեցոյ
է կերակուր։ Յայնժամ կոչեաց թագաւորն զեր-
կոտասան իշխանս տանուտերս՝ որք էին խրատա-
տու թագաւորութեան իւրոյ. և ասէ ցնոսա՝ զինչ ա-
րարից քանզի ոչ կարացի դարձուցանել զալեքսիա-
նոս այնպիսի խորհրդոյն։ Պատասխանի ետուն իշ-
խանքն և ասեն. ոչ թէ քանիւ ինչ վարի թագա-
ւորութիւս մեր, այլ հրամայեա արկանել 'ի սե-
նեակ։ Եւ թագաւորն հրամայեաց արձակել զա-
լեքսիանոս. և առաքեաց հրամանակս ընդ մի իշ-
խանուհիս իւր, ժողովել զամենայն գալ 'ի հարսանիս։
Եւ իբրև գնացին քահանայքն կոչել զալեքսիանոս
զի պսակեսցեն ընդ դստեր թագաւորին։ Ասաց
ալեքսիանոս ընդդէմ քահանայիցն. մի դնէք ինձ
պսակ թառամելի, զի զանթառամն շահեցայց։
Պատասխանի ետուն քահանայքն և ասեն. որդեակ
թէպէտ 'ի թագաւորէն ոչ երկնչիս, այլ 'ի մենջ
պատկառեա. Եւ նա լուռ եղև. և տարեալ պսա-
կեցին ընդ դստեր թագաւորին, և արարին 12
օր հարսանիս։ Եւ ապա առեալ թագաւորն զձե-
ռանէ մանկան և աղջկան՝ էարկ զնոսա 'ի սենեակ
և փակեաց 'ի վերայ նոցա զերթն դրան։ Եւ յարուցե-
ալ

մանուկն շիջոյց զկանթեղսն և զմոմեղէնսն, և ա-
սէ ցաղջիկն. քո՛յր՝ պա՛րտ է ինձ և քեզ յաղօթս
կալ և ապաւինել՝ ի միասին։ Եւ եղեալ կային յա-
ղօթս և ննջեցին սրբութբ։ Եւ յետ 12 աւուրն
անցանելոյ՝ ասէ աղջիկն ցալեքսիանոս. ընդէ՞ր ոչ
յայտնեցեր զքեզ հօր և մօրքոյ. զի թաղումդ եղա-
տու բժիշկք կամ՝ ի քաղաքիս։ Ասէ ցնա ալեքսի-
անոս. սահմանէ՞ զի այր մարդոյն համարձակ է քան
զկինն. պա՛րտ է ինձ երեք անգամ խօսել, և քեզ
ոչ տալ պատասխանի։ Եւ յարուցեալ եկաց յա-
ղօթս և ասաց այսպէս. Տր աբրահամու իսահակայ
և յակոբայ. որ փրկեցեր զերիս մանկունսն՝ ի հը-
րոյն բորբոքելոյ, փրկեա՛ և զիս այս գազան կնո-
ջէս. զի մարմին կնոջ ոչ հուր է, և ես ոչ խոտ
առաջի հրոյ կամ՝ ի յայրումն առաջի սորա. զի
կին՝ ընտանի գազան է չար և ոչ տայ հանգչիլ
մարդոյ. և լռեալ ննջեցին։ Եւ յարուցեալ առա-
ւօտուն ալեքսիանոս ասէ ցաղջիկն՝ արի կացցուք
յաղօթս։ Ասէ աղջիկն ցալեքսիանոս. ընդէ՞ր ոչ
խօսիս ընդ իս և ոչ բանիւ մխիթարես զիս։ Յայն
ժամ ալեքսիանոս ետ զմատանին ոսկի՝ ի նա և ասէ
քո՛յր՝ առ զսա և պահեա՛ ի քեզ յիշելիք. մինչ ես
երթայց՝ ի դուռն եկեղեցւոյն յաղօթս, և այլ
դամ կատարեմ զկամս քո։ Եւ բացեալ զդրունսն,
եղեալ գնաց մինչև յանկելունոյն. և տեսեալ զաղ-
քատիկ մի որ ունէր նա մազեղէն մի զանձամբն
խուրջ. ետ նմա զձիրանին՝ և էառ զմազեղէնն ի

և

եւ ագաւ ինքն. Եւ՛ էր գին ծիրանւոյն երեք հար-
իւր դահեկան։

Եւ՛ աղքատիկն Թագւոյ զոյն։

Եւ առեալ ալեքսիանոս այլ կարկատուն կտաւ մի, եդեալ զգլխովն եւ ծածկեաց զերեսն իւր. իբր եւ եղանց պան մի գիշերոյն՝ իմացաւ կինն զխորհուրդսն. Զինչ եւ աղաղակ բարձեալ լայր։ Եւ՛ յարուցեալ դռնապանին ետես զդուռնսն բացեալ. եւ վառեցին ջահս եւ ընթացան ՚ի յորոնել։ Եւ՛ ՚ի յորնելն առ ոտն կոխէին զնա. եւ նա ասէր՝ մի՛ նեղէք զիս. թէպէտ աղքատ եմ, այլ մարդ արարած եմ, Եւ՛ իբրեւ էջ առ եզր ծովուն. եգիտ նաւ մի որ երթայր յեդեմ. եւ ասէ ցնաւավարն. որդեակ՝ տար զիս յեդեմ, եւ ես յաղօթս առնեմ վասն քո։ Ասէ նաւավարն. աղքատիկ ընդէ՞ր ծածկես զերեսդ քո. եւ ո՞չ բանաս։ Եւ՛ նա ասէ, զի խստակրօն վարդապետի աշակերտ եմ. եւ նա պատուիրեալ է ինձ թէ՝ մի՛ հայիր ՚ի մարդ եւ ո՛չ յձ, եւ մի բանար զերեսդ։ Եւ՛ մտեալ ՚ի նաւ՛ հասին յարապօլիս. եւ անտի ՚ի կիլիկիա. եւ անտի յեդեմ. եւ յեդեմէ ՚ի լեառն սինա՝ զոր տր խօսեցաւ ը մովսէսի։ Եւ՛ արար անդ զնշան խաչին ՚ի վր նր եւ ասէ. սա եղիցի ինձ գերեզման եւ տուն յարկի. եւ եկաց անդ ալեքսիանոս ամս 34. եւ էր կերակուր նր ՚ի ծայրից ծառոց եւ ՚ի խոտոց. եւ ըմպելի նորա ջուր անձրեւաց։ Եւ՛ ապա սատանայ ընկէց ՚ի սիրտ նր զկարօտութ եւ զգութ ծնողացն, եւ այնու նեղէր զնա։ Եւ՛ յարուցեալ

էջ

էջ առ եզր ծովուն, և եգիտ նաւ մի որ երթայր
երուսաղէմ և ասէ ցնաւավարն տար զիս յերուս-
աղէմ, և ես վասն քո՛ աղօթս առնեմ: Եւ առեալ
զնա նաւեցին. և իմացեալ դիւացն յարուցին հողմ
և մրրիկ ՚ի ծովուն, և սկսաւ ալեկոծիլ նաւն, և
ոչ կարացին յաղթել: Յայնժամ եկին 7 դևք
չարագոյն քան զառաջինն և ասեն ցմիմեանս. մեք
դորա համբերութիւն գիտեմք. զի սորա զօրութիւն
առաւել է քան զ յոբայն. այլ զայս առնեմք
դմա չարութիւն. զի յարուցանեմք հողմն սաստիկ
՚ի վերայ ծովուն, և տանիմք զդա ՚ի դուռն տան հօր
իւրոյ. զի տեսանելով զաղէտս ծնողացն իւրոց
տայցէ ծանօթութիւն: Եւ հանին հողմն սաստիկ ՚ի
վերայ ծովուն, և տարեալ ընկեցին զնաւն ՚ի դուռն
տան հօր իւրոյ: Իբրև գիտաց ալէքսիանոս թէ
սատանայի էր գործն՝ ասէ. երթամ ՚ի դուռն տան
